

ՀՈՒՅՄ

Մշակութային և հասարակական ամսագիր

لويس

LOUYS

Armenian Monthly

ISSN 1682-5446

Փառք Մայիսյան հերոսամարտերի կերտողներին



199, Մայիս 2015 թ.

No 199, May 2015

شماره ۱۹۹ خرداد ماه ۱۳۹۴

Այս համարում

Հայերեն բաժին

1- Մայիսյան.....	1
2- Հայաստան.....	4
3- Արևմտյան Հայաստան.....	9
4- Միլյուրք.....	13
5- Միջազգային.....	14
6- Հասարակական.....	17
7- Մշակույթ.....	21
8- Խոհեր.....	24
9- Գծանկարչություն.....	25
10- Առածանի.....	25

Պարսկերեն բաժին

1- Լուրեր.....	1-3
2- Հայ գրականություն.....	4-7

Ճապիկի առաջին էջում՝ Մարդարապատ.

Վերջին էջում՝ Էդ. Բաղդասարյանի նոր գրերը

Համար 199, Մայիս 2015 թ.

No. 199, May 2015

ماهنامه لویس - شماره ۱۹۹ خرداد ماه ۱۳۹۴

ԼՈՒՅՍ

Մշակութային եւ հասարակական ամսագիր

Արտոնատեր եւ գլխավոր խմբագիր՝

Էդ. Բաղդասարյան

Խմբագրական կազմ՝

Թամար Փանոսյան, Վանիկ Բաղդասարյան

Թամ Ղարախանյան, Մաթենիկ Ավետիսյան

Էմմա Բեգիջանյան, Հովիկ Վարդումյան,

Փոստարկը 15875-9488 Թեհրան - Իրան

Էլեկտրոնային փոստ՝ louys_monthly@yahoo.com

Ինտերնետային հասցեն՝ www.louysonline.com

LOUYS

Armenian Cultural and Social Monthly

License-holder and Editor-in-Chief

Edic Baghdasarian

www.Edic-Baghdasarian.com

WEB master: **Baruyr Baghdasarian**

POBox 15875-9488 Tehran – Iran

E-mail : louys_monthly@yahoo.com

Internet : www.louysonline.com

Թերթի Գինը՝ Հատավաճառ - 5000 ռիալ

Բաժանորդագրություն՝

Իրան՝ մեկ տարի՝ 60,000 ռիալ

Արտասահման՝ մեկ տարի՝ 50 ԱՄՆ դոլար

Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել խմբագրության տեսակետներին: Արտատպության դեպքում հղումը «ԼՈՒՅՍ» - ին

Մայիսյան հերոսամարտերը*

Դր. Էդիկ Բաղդասարյան

Տրապիզոնի հաշտության բանակցությունների ձախողումից հետո թուրքական զորքերը արշավեցին Արեւելյան Հայաստան: 1918 թ. մարտի վերջին ընկավ Սարիղամիշը, ապրիլի կեսերին, Անդրկովկասյան կառավարության (նախագահ՝ Ա. Չխենկելի) դավաճանական վարքագծի հետեւանքով, գրեթե առանց դիմադրության թուրքերին հանձնվեց լավ ամրացված Կարսը: Մտանալով Անդրկովկասի անկախության հայտարարման լուրը թուրքական կովկասյան բանակի հրամանատարությունը պահանջեց անհապաղ դատարկել Կարսը: Ուստի Չխենկելիին զորքերի հրամանատարությունը կարգադրեց՝ առանց դիմադրության եւ կրակոցի հանձնել Կարսի ամրոցը: Այդ կարգադրությունը առարկեց հայկական առաջին կորպուսի հրամանատար, գեներալ Թ. Նազարբեկյանը, որն այդ ժամանակ ստանձնել էր ճակատի հրամանատարությունը: Նա գտնում էր, որ Կարսի ամրոցը ի վիճակի է դիմադրել թուրքերի ներխուժմանը, ունի պաշտպանվելու բոլոր հնարավորությունները: Ապրիլի 1-ի վիճակով, Սարիղամիշի անկումից հետո, Կարսի մատուցյունը պաշտպանում էին հայկական առանձին կորպուսի զորամասերը, իսկ Կարսի ամրոցում գտնվում էին հայկական 2-րդ գունդը, առանձին հրետանային գունդը, սակրավորների վաշտը, հեծյալ եւ հետխուսն կամավորական ջոկատը, հունական կամավորական գնդի մի մասը, մեկ հեծյալ գունդ, ռուսական կամավորական գունդը: Գեներալ Նազարբեկյանի հրամանով Կարսի պաշտպանները թուրքական հարձակոցի դրժմանը դիմադրեցին հրետանային հուժկու համագործակցությամբ: Թուրքերը կանգ առան: Սակայն ապրիլի 11-ին հետեւեց Չխենկելու նոր հրամանը՝ Կարսը անհապաղ հանձնելու վերաբերյալ: Կնքվեց ժամանակավոր զինադադար: Կարսը անցավ թուրքերի ձեռքը:

Վիճակը ամենեւին էլ չփրկեց Անդրկովկասը անկախ հայտարարելը: Չկար համբարաշխություն Անդրկովկասյան կառավարության ներսում եւ Սեյմում: Նոր կառավարության նախագահ, մենչեւիկ Ա. Չխենկելին վարում էր ըստ հույժյան թուրքամետ գիծ:

Անդրկովկասի երեք հիմնական (հայ, վրացի, ադրբեջանցի) ազգերի անմիաբանությունն էր պատճառը, որ թուրքական զորքերը ռազմական հաջողություններ էին ունենում:

Թուրք զավթիչները դեմ պայքարի հարցում հայ քաղաքական բոլոր կուսակցությունները միակամ էին: 1918թ. ապրիլին Ալեքսանդրապոլում Հայոց ազգային խորհրդի նախաձեռնությամբ կայացավ հայ քաղաքական կուսակցությունների եւ անկուսակցական գործիչների խորհրդակցություն: Խորհրդակցությունը որոշեց «բոլոր հնարավոր միջոցներով շարունակել երկրի պաշտպանությունը»: Սակայն հայությունը միայնակ ի վիճակի չէր դիմակայել թուրք զավթիչներին:

Թուրքական զորքերի ռազմական հաջողությունները հարկադրեցին Անդրկովկասի կառավարությանը վերսկսել Տրապիզոնում ընդհատված բանակցությունները: Մայիսի 11-ին Բաթումում սկսվեցին թուրք-անդրկովկասյան հաշտության նոր բանակցությունները: Սակայն ռազմական հաջողություններով արբեցած թուրքերն ամենեւին մտադրություն չունեին բավարարվել Բրեստի հաշտության պայմաններով: Նրանք կողոպտական նոր պահանջներ ներկայացրին, որի պատճառով բանակցությունները կրկին մտան փակուղի:

Օգտվելով նպաստավոր հանգամանքից՝ մայիսի 15-ին թուրքական զորքերը հանկարծակի հարձակումով գրավեցին Ալեքսանդրապոլը (Գյումրին) եւ առաջ շարժվեցին Երևո՝ հիմնական ուղղություններով: Հայկական զորքերի հրամանատար, գեներալ Նազարբեկյանը իր շտաբը տեղափոխեց Ղարաբլիխա, իսկ Համամյուզ գյուղը մայիսի 21-ին թուրքերի ձեռքն ընկնելուց հետո՝ Դիրխան: Թուրքական զորքերի մի խմբավորում Ալեքսանդրապոլից շարժվեց դեպի Արարատյան դաշտ՝ Երեւանը եւ էջմիածինը գրավելու, իսկ մյուսը՝ Ղարաբլիխա (Վանաձոր)-Ղազախով ռազմավարական ուղղություն վերցրեց դեպի Բաքու: Հայկական ազգային զորամասերը անկարող էին երկարատեւ դիմադրություն ցույց տալ զավթիչներին: Հայ ժողովրդի գլխին նորից կախվեց ֆիզիկական բնաջնջման վտանգը:

*Էդ. Բաղդասարյան, «Հայ պետականության պատմություն», Տրոնտո, 2013, էջ 242-262



Բաշ-Ապարանի հերոսամարտը

Սարգարապատի հերոսամարտը

Գեներալ Նազարբեկյանը Դիլիջանից հուսահատական հեռագիր է հղում Թիֆլիսի հայոց ազգային խորհրդին՝ հայտնելով, որ ինքը ոչ մի գինվոր չունի, ուստի պետք է ընդունել հաշտության ամեն մի պայմանագիր: Բաթումից հայ հատվիրակների խորհրդով Համո Օհանջանյանը Երեւանի ազգային խորհրդին հեռագրում է՝ առանց դիմադրության քաղաքը հանձնել թուրքերի ուղղմամբ: Երեւանի քաղաքային Դումայի նախագահ դաշնակցական թոշյանի առաջարկով Դուման ընդունում է Հ. Օհանջանյանի առաջարկը: Այս որոշման դեմ քաղաքում համաժողովրդական ցույց է կազմակերպվում, որի մասնակիցները որոշում են կռվել եւ պաշտպանել քաղաքը: Ոտքի է ելնում նաեւ քաղաքի շրջակա գյուղերի բնակչուկները: Թշնամուն դիմադրելու համար գյուղացիները խմբերով գալիս են Քանաքեռից, Աւինջից, Ավանից եւ այլ գյուղերից:

Թուրքերին դիմակայելու համար կատարվեց հայկական գինված ուժերի վերազատավորում: Ստեղծվեց Երեւանյան զորախումբը, որի հրամանատարն էր գեներալ Մուսես Սիլիկյանը: Արարատյան դաշտ ներխուժած թուրք սակայրները (գինվորները) մայիսի 21-ին գրավեցին Սարգարապատ (Արմավիր) գյուղը ու կայարանը: Հայ ժողովուրդը ազգային-ազատագրական պայքարի ելավ, ուր վճռվելու էր նրա իննել-չիննելու հարցը:

Մայիսի 22-ի վաղ առավոտյան եկեղեցու գանդերի ղողանների ներքո սկսվեց Սարգարապատի պատմական ճակատամարտը: Սարգարապատի զորամուկտը, որի հրամանատարը գնդապետ Դանիել Բեկ-Փիրումյանն էր, հրետանային նախապատրաստությունից հետո անցավ հակահարձակման: Հայկական զինուժը հուժկու գրոհով հետ վերցրեց թշնամու կողմից մեկ օր առաջ գրաված Սարգարապատը: Թուրքերը, մեծ կորուստներ տալով, խուճապահար նահանջեցին մինչեւ Արաքս կայարանի մոտակա բարձունքները: Իսկ մի քանի օր տեւած համառ ու ծանր մարտերից հետո թուրքական 15-հազարանոց զորքը ջախջախվեց եւ նահանջեց դեպի Գյումրի:



Բաշ-Ապարանի հուշարձանը, Ապարանում - 1979

Սարգարապատի ճակատամարտին գրեթե զուգրնթաց ահեղ մարտեր մղվեցին նաեւ Բաշ-Ապարանում եւ Ղարաքիլիսայում: Մայիսի 22-ին թուրքական մի դիվիզիա, գրավելով Սպիտակը, շարժվեց Բաշ-Ապարան՝ նպատակ ունենալով Երեւանի վրա գրոհել հյուսիսից, մտնել Արարատյան դաշտ եւ Սարգարապատի մոտ հայկական զորամասերին հարվածել թիկունքից: Ստեղծվեց հարվածային խումբ: Հայկական զորամասը, Դրոյի դեկավարությունում, ոչ միայն կասեցրեց թուրքերի առաջընթացը, այլեւ խիզախ հակադրոհով փախուստի մատնեց թշնամուն: Այդ կռիվներում հայերին օգնում էր Ջահանգիր աղայի քրդական (եզդիական) ջոկատը:

Մայիսի 24-28-ը ահեղ մարտեր տեղի ունեցան Ղարաքիլիսայի մոտ: Երկու կողմերն էլ ունեցան մեծ կորուստներ: Չնայած թշնամին ի վերջո գրավեց Ղարաքիլիսան եւ շարժվեց առաջ, սակայն այնտեղ նույնպես հայերը ցույց տվեցին հիրավի հերոսական դիմադրություն: Դա խոստովանել է հենց թուրք հրամանատարությունը: Ղարաքիլիսայի կռիվներում աչքի ընկան սպաներ Ա. Բեյ Մամիկոնյանը, Ն. Ղորղանյանը, Գ. Նժդեհը, մարտերում հերոսարար գոհվեց կապիտան Գ. Տեր-Մուսիսյանը եւ ուրիշներ:



Դանիել Բեկ Փիրումյան 1861-1921

Այդ հաղթանակը բարձրացրեց զորքի եւ ժողովրդի տրամադրությունը: Հարկ է նշել, որ հայրենիքի եւ Երեւանի պաշտպանության համար ոտքի ելավ Երեւանի ու Արարատյան դաշտի ողջ հայ բնակչուկները: Հարյուրավոր մարդիկ, անկախ կուսակցական պատկանելությունից, մասնագիտությունից, քաղաքական համոզմունքներից ու տարիքից, ներկայանում էին զորամաս եւ կամավոր մեկնում ճակատ: Գյուղացիները տրամադրում էին փոխադրամիջոցներ, փամփուշտ, սննդամթերք, մտնում աշխարհազորայինների շարքերը, փորում խրամատներ: Հերոսամարտը ստացավ համաժողովրդական բնույթ, հայ ժողովուրդը համախմբվել, մի բուռնցք էր դարձել, որովհետեւ յուրաքանչյուր հայ գիտակցում էր, որ ինքը մարտնչում է հանուն հայրենիքի, հանուն կյանքի ու ազգային արժանապատվության:



Գեն. Թովմ. Նազարբեկյան (1855-1928)

Այսպիսով Սարգարապատի, Բաշ-Ապարանի եւ Ղարաքիլիսայի հերոսամարտերում հայ ժողովուրդը կարողացավ թշնամուն արժանի հակահարված տալ եւ վիժեցնել Արեւելյան Հայաստանը գավթելու ու տեղի հայուկները ոչնչացնելու երկաթուղիների ծրագիրը: Մայիսյան հերոսամարտը ամբողջ հայ ժողովրդի հավաքական ուժի եւ ազգային միասնության հաղթանակն էր: Ավելին, եղեռն տեսած, կյանքի ու մահվան եզրին կանգնած հայ ժողովուրդը ոչ միայն պահպանեց իր ֆիզիկական գոյությունը, այլ եւ ստիպեց հակառակորդին հաշվի նստել իր հետ եւ ճանաչել իր անկախ ապրելու իրավունքը: Մայիսյան

Տերոսամարտերը հիմք հանդիսացան Հայաստանի անկախության համար: Եվ հենց այդ հաղթանակի օրերին հռչակվեց Հայաստանի անկախությունը:



Դրաստամատ Կանայան - Դրո - 1883-1956

Մայիսյան Տերոսամարտը դարձավ հայոց նոր ժամանակների Ավարայրը, որ իր խաղաղած դերով ու նշանակությամբ, հիրավի, հայ ժողովրդի պատմության ամենատեսադրական դրվագներից է: Այս դեպքերով, կարելի է ասել, փակվում է հայ ժողովրդի ողբերգական և Տերոսական իրադարձություններով հարուստ նոր պատմության շրջանը, և սկսվում նորագույն՝ հայկական պետականությունների պատմության ժամանակաշրջանը¹:

Հայաստանի առաջին հանրապետությունը (1918թ. մայիս - 1920թ. նոյեմբեր-դեկտեմբեր)


Հայաստանի Հանրապետության հռչակումը

Այն օրերին, երբ հայ ժողովուրդը թուրքական զավթիչների դեմ կայնքի ու մահվան կռիվներ էր մղում 1918թ. մայիսյան Տերոսամարտերում, սուր հակասություններ էին առաջացել երկրամասի երեք հիմնական ազգություններից կազմված Անդրկովկասյան Դաշնային Հանրապետության իշխանության մարմիններում: Այդ իսկ պատճառով Անդրկովկասյան Դաշնության փլուզումը դարձավ անխուսափելի:

1918 թ. մայիսի 28-ին լուծարվեց Անդրկովկասյան սեյմը (պառլամենտը), և դրանով իսկ կազմալուծվեց Անդրկովկասյան Հանրապետությունը: Այդ նույն օրը Վրաստանը հռչակեց իր անկախությունը, հաջորդ օրը՝ Ադրբեյջանը, իսկ մայիսի 28-ին Թիֆլիսում գործող Հայոց (կենտրոնական) Ազգային խորհուրդը որոշում կայացրեց հռչակել Հայաստանի անկախությունը: Ընդունված հայտարարագրում մասնավորապես ասվում էր. «Անդրկովկասի քաղաքական ամբողջությունը լուծարումով և Վրաստանի ու Ադրբեյջանի անկախության հռչակումով ստեղծված նոր կացության հանդեպ՝ Հայոց Ազգային խորհուրդը իրեն հայտարարում է հայկական դավաճանների գերագույն և միակ իշխանությունը»:

Ըստ հայ պատմաբան Զարեանդի՝ «Հայաստանի Հանրապետության դեմ առարկություն կա, որ այն «անոնցն» էր: Իսկ այդ «անոնցը» ունի երեկո իմաստ՝ նախ այն, որ արեւելահայերն ենկերտել Հայաստանի Հանրապետությունը, ապա երկրորդն այն է, որ այն ՀՅԴ-ի ձեռնարկածն է... Սակայն Հայաստանի Հանրապետությունը հիմնվեց բովանդակ հայ ժողովրդի ճիշդությամբ, նրա ստեղծման մեջ դեր կատարեց ո՛չ միայն արեւելահայությունը, այլև արեւմտահայ գաղթականությունը և աշխարհի չորս կողմերից երկիր փութացող կամավորությունը: Հայոց ազատությունը կերտեցին Դաշնակցական պետերի Արամի և Դրոյի հետ միասին ոչ-կուսակցական գործադիրներ՝ Նազարբեկյանը, Սիլիկյանը և Փիրումյանը: Ի՞նչու հայ ժողովրդի միահամուռ

ջանքերով ստեղծված Հանրապետության հիմնադրի պատիվը տալ միայն արեւելահայության և միայն Դաշնակցությունը»³:



Այսպիսով, եղեւն ապրած հայ ժողովուրդը, թշնամու մահաբեր սպառնալիքի պայմաններում, ուժ գտավ իր մեջ և վերականգնեց հայոց անկախ պետականությունը: Հայաստանի անկախության հռչակումը պատմական անհրաժեշտություն էր և ստեղծված պայմաններում միակ նախնադրելի ուղին: Հայաստանի անկախության համար հայ ժողովուրդը պարտական էր ազատագրական իր տեւական պայքարին, իսկ կոնկրետ պարագայում Սարգսրապատի, Բաշ Ապարանի, Ղարաբլիխայի հաղթական Տերոսամարտերին: Ի նշանավորումն այդ իրադարձության՝ Մայիսի 28-ը համարվում է համայն հայության նվիրական տոներից մեկը՝ Առաջին Հանրապետության անկախության օրը:

Հայաստանի անկախության հռչակումը շրջադարձային եղավ հայ ժողովրդի քաղաքական և հոգեւոր-մշակութային կյանքում⁴:

Բաթումի պայմանագիրը

1918 թ. ապրիլին Տրապիզոնում ընդհատված թուրք-անդրկովկասյան բանակցությունները մայիսի սկզբներին վերսկսվեցին Բաթումում: Թուրքերն այլևի կողոպտիչ պայմաններ ներկայացրին: Նրանք մայիսի 28-ին վերջնադիր ավեցին անդրկովկասյան պատվիրակությանը: Բայց քանի որ հենց նույն օրը Անդրկովկասյան Հանրապետությունը կազմալուծվեց, ուստի նորահռչակ Հանրապետություններից յուրաքանչյուրն ինքը պետք է լուծեր թուրքիայի հետ պատերազմի և խաղաղության հարցը:



Ալ. Խատիսյան



Րով. Քաչազնունի



Մ. Պապաջանյան

Հենց Հայաստանի անկախության հռչակման օրը՝ մայիսի 28-ին, Հայոց Ազգային խորհուրդը որոշեց նոր պատվիրակություն ուղարկել Բաթում և հաշտություն կնքել թուրքերի հետ: Նորանկախ Հայաստանի պատվիրակությունը գլխավորեց Ալ. Պապաջանյան:

Սակայն Հայոց գեներալ փառքը խամրում է Բաթումի դիվանագիտական սեղանների վրա. թեեւ Հայաստանում գործը պահանջում էր մերժել հաշտությունը, և ժողովուրդն էլ կողմ էր կռիվը շարունակելուն, Թիֆլիսի դաշնակցական քաղաքապետներից


³ - Զարեանդ, Հայաստանի Հանրապետությունը և անոր դերը հայոց պատմության մեջ, Հայրենիք ամսագիր, Բոստոն, 1963, համար 7 (արեւելահայերեն վերածեցինք մենք):

⁴ - Ա. Մ. Հակոբյան, Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները, էջ 9-11: Հեղինակների կոլեկտիվ, Հայոց պատմություն, Երևան 1994, էջ 231-232:


¹ - ՀժՊ, հ. 7, էջ 38-45; Հայ, Հարց Հ, էջ 77, 291-292, 405-406: Հեղինակների կոլեկտիվ, Հայոց պատմություն, Երևան 1994, էջ 227-231:

² - Հեղինակների կոլեկտիվ, Հայոց Պատմություն, Երևան 1994, էջ 231:

բաղկացած պատվիրակություններ (Ալեք-սանդր խատիսյան, Հովհաննես Քաջազունի, Միքայել Պապաջանյան), որ ղեկավարվում էր Կովկասի մայրաքաղաքում նստած Հայ Ազգային Խորհրդի կողմից, անտեղյակ ռազմաճակատի կացությունը, իր հաղթանակած սվինի փոխարեն, թշնամու ողորմածություններ էր գծում Հայոց պետության սահմանները, եւ հաշտագիրն ստորագրելուց հետո միայն, Վեհիբ փաշայից խմանում, որ հայկական զորքը կռվել է հերոսաբար եւ հաղթել:



Բաթումի



Батумский БМ 103 40004
Фото: www.10168.com

Մեխմետ Վեհիբ Փաշա (աջ) եւ նրա մեծ թղթայր՝ Ասադ Փաշա (ձախ)

Մախսի վերջին սկզբնական հայ-թուրքական բանակցությունները: Հունիսի 4-ին կնքվեց Բաթումի հաշտության պայմանագիրը Հայաստանի Հանրապետության եւ Օսմանյան թուրքիայի միջև: Պայմանները չափազանց ծանր էին Հայաստանի համար:

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԸՍՏ ԲԱԹՈՒՄԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

Կնքված պայմանագրով հայ-թուրքական սահմանագիծը այնպես էր տարվում, որ երկիրը մասնատվում եւ չնչին տարածք էր թողնվում Հայաստանին:

Պայմանագրի համաձայն Հայաստանը ունենալու էր սահմանափակ թվով զորք: Երկաթուղիների վերահսկողությունը անցնելու էր թուրքիային, որպեսզի կարողանա Հայաստանի վրայով զորք տեղափոխել Արդրեջան: Դրա նպատակն էր խորտակել Մտ. Շահումյանի գլխավորած Բաթլի կոմունան եւ տիրանալ Բաթլի նավթին: Դրանից զատ Հայաստանը պարտավորվում էր կազմավորվել հայկական ազգային անկանոն զորախմբերը եւ այլն:

Այսպիսով, Բաթումի պայմանագրով թուրքիային էր անցնում ոչ միայն Արեւմտյան Հայաստանը, այլ եւ Արեւելյան Հայաստանի գլխի մասը՝ Կարսի մարզը եւ շուրջ 5 գավառ: (Թուրքիան գավթեց Արդվինը, Կարսը, Արդահանը, Օլթինը, Կազվանը, Ախալքալկը, Ախալցխան, Մուրմալուի գավառը, էջմիծնի եւ Ալեքսանդրապոլի գավառների երեք քաղաքը, Երեւանի գավառի կեսը եւ Շարուր-Գարաբաղյան գավառի մեկ հինգերորդը, Ալեքսանդրապոլը, ամբողջ երկաթուղին մինչեւ Զուլֆա) Արդյունքում՝ Հայաստանի Հանրապետությանը փաստորեն մնում էր ընդամենը 9 հազ. քառ. կմ տարածք՝ 321 հազար բնակչությամբ, որն ընդգրկում էր Սեւանա լճի ավազանը եւ Արարատյան դաշտի մի մասը: Այս կապակցությամբ տեղին է հիշել գերմանացի մի ղեկավանագետի արտահայտած հետեւյալ պատկերավոր խոսքերը. «Թուրքերը հայերին տեղ տվեցին Սեւանում լողանալու համար, բայց զուրս գալու՝ չորանալու համար տեղ չտվեցին»: Ընդհանուր հաշվով թուրքիան Արեւելյան Հայաստանից խլում էր 28 հազ. քառ. կմ տարածք: Պատմաբան Լեոն Հայաստանին մնացած այդ տարածքը իրավամբ համարել է ոչ թե հայ ժողովրդի բնակության տեղ, այլ գերեզման:

Բայց մյուս կողմից, ճակատագրի հետեւանքով, սա անկախ Հայաստանի առաջին միջազգային փաստաթուղթն է, որով թուրքիան առաջինը ճանաչեց Հայաստանի անկախությունը: Այ. խատիսյանը, ամփոփելով հայ-թուրքական բանակցությունների արդյունքները, իր ուղարկած նամակում գրում էր. «Մենք կրեքնք վատ հաշտության պայմանագիր, բայց կրեքնք նաեւ անկախ Հայաստան, տուն, բուն, որտեղ կռվում է ժողովրդական միտքը: Այս բոլորը կկապի, կմիավորի, կբարձրացնի ոգին, իսկ դա կարեւոր է: Ես հավատում եմ մեր պետությանը»:

Զորավար Անդրանիկը մերժեց ճանաչել Բաթումի ստրկացուցիչ «դաժան» դաշինքը: Բաթլի Ազգային խորհուրդը, ուր մեծամասնություն էին կազմում դաշնակցականները, նույնպես մերժեց այդ դաշինքը: Արեւմտահայ դաշնակցականների պաշտոնավորները «Աշխատանք»-ը գրել է. «Եւ եթե կնքված է հաշտությունը, ստորագրված են պայմանները... ապա ուրեմն զորված է հանցանքներու ամենասերը, դավաճանության ամենատեսակիին, որոնց նմանը հայկական տարեգրություն թե՛ չէ եղած դեռ» (1918թ, հունիսի 5): Շատերը խորհում էին թե «դաշնակցականները պարզապես ծախեցին Սարդարապատի, Բաշ-Ապարանի եւ Ղարաբլիխայի հաղթանակները»:

Բաթումի պայմանագրով թուրքիան ճանաչեց Հայաստանի անկախությունը: Հետաքրքրական է որ գերմանացիները Թաբեաթ-փաշահի հետ կնքած գաղտնի պայմանագրով, թուրքերին պարտադրել են Հայաստանին շնորհել ինքնավարություն:

ԲԵՌՆՈՒՄ ՌՈՒՍԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՀԱՎԱՍԱՐՄԱՍԱՐԻ ՀԵՌՈՒԳԻՐԸ

No 432
Մանգելշտամից

Թարգմանությունն ուսերեցից

14/30 հունվարի, 1917 թ.

Համաձայն գաղտնի տեղեկությունների, Շվեյցարիայում գտնվող Թեոդոս Ալբանիայի դեսպանորդ Սուրբեյա բեյը պնդում է, որ Թալապո-փաշան Բեռլինում եղած ժամանակ գերմանացիների հետ կնքել է գաղտնի համաձայնագիր, որով Թուրքիան պարտավորվել է Հայաստանին շնորհել ինքնավարություն, փոխարենը Գերմանիան երաշխավորում է Օսմանյան կայսրության անձեռնմխելիությունը: Սուրբեյայի խոսքերով, գերմանացիների նպատակն է՝ իրենց վրայից հանել հայկական կոտորածների պատասխանատվությունը եւ ազգությունների ինքնարոշ-ման սկզբունքի ուս պաշտպանների մեջ հարուցել համակրանք Թուրքիայի նկատմամբ: Նկատի առնելով, որ Թուրքիային է վերապահվել նախաձեռնությունը, Սուրբեյայի պնդումները չեն հակասում ՓՇեոսում Թուրքիայի կուպատտի պն հաղորդմանը (տեսնել իմ համար 2345 հետագիրը), որ Բեռլինում հայկական հարցը ճանաչել են որպես Թուրքիայի ներքին գործ: Նա սակայն ավելի առաջ է գնում Ջյուրխիում Թուրքիայի հյուպատոսի հայտարարությունից (տես իմ համար 383 հաղագիրը), ըստ որի ինքնավարությունը հնարավոր է համարվել սուկ 1914 թվականի ուս-թուրքական ակտի սահմաններում: Համեմատելով դեպի այդ բոլոր երեք կարելի է հետեցնել, որ Գերմանիան հայկական հարցում սկսել է մի նոր խաղ եւ ձգտում է Թուրքիայի հաշվին մի ավելորդ անգամ հանդես գալ փոքր ժողովուրդների «ազատարարի» դերում: Բնորոշ է, որ ՓՇեոսի հայերի շրջանում մինչեւ իսկ լուրեր են պատվում, թե առաջիկայում Գերմանիան հռչակելու է «անկախ» Հայաստան:

⁵ - 1918-1921. Հետադարձ հայացք, Երեւան 1998, էջ 4:
⁶ - Հ. Գ. Թուրքյան, Սրբարապետի հետամարտը, Երեւան, Թեհրան 1982, էջ 212: Բ. Ս. Օհանջանյան, Դաշնակցությունը առանց դիմակի, Երեւան 1980, էջ 93-95: Հեղինակների կողմից, Հայոց պատմություն, Երեւան 1994, էջ 232-233:

⁷ - Գերսամ Ահարոնյան, Մեծ երազի ճամբուն վրա, Բ տպագրություն, Բեյրութ, 1964, էջ 111:

ՕՆՈՒՑ

Հարկ է նշել, որ հայկական հարցը եւ եւրոպական երկրների մտեցումներն ու միջամտությունները պիտի քննարկել «Արևելյան հարցի» շրջանակում, որին կանդիդատու-նանք հետագա էջերում:

Բաժնումի պայմանագիրը, որը չի վավերացվել ո՛չ Հայաստանի եւ ո՛չ էլ Թուրքիայի կառավարությունների կողմից, իր ուժը պահպանեց մինչև համաշխարհային պատերազմի ավարտը՝ 1918 թ. նոյեմբերը՝:

Հայաստան

Լրանում է Շուշիի ազատագրման գործողության 23-ամյակը



Մայիսի 8-ին լրանում է ռազմավարական նշանակության Շուշի քաղաքի ազատագրման բացառիկ օպերացիայի 23-ամյակը:

Ադրբեջանի կողմից պարտադրված պատերազմի շրջանում Շուշին վերածվել էր արբեջանական զինվորական հենակետի: Հակառակորդը, օգտագործելով քաղաքի բարձրադիր դիրքը, արդեն 1991 թվականի ավարտին սկսեց գնդակոծել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մայրաքաղաք Ստեփանակերտը: Իրավիճակը կտրուկ վատացավ 1992 թվականի փետրվարին, երբ ադրբեջանցիներն սկսեցին «Գրադ» զինատեսակ օգտագործել:

Հատկանշական էր հատկապես գնդակոծման բնույթը. այն ուղղված էր հատկապես բանկեյի թաղամասերին, որպեսզի հնարավորինս մեծ թվով խաղաղ բնակչություն սպանվեր: Անմարդկային գնդակոծումների գոհ դարձան հարյուրավոր խաղաղ բնակիչներ: Արդեն ապրիլին Ստեփանակերտի գոյությունը մահացու վտանգ էր սպառնում: Ամսվա վերջին հայ զինվորներն ընդունեցին միակ հնարավոր որոշումը՝ գրոհով ադրբեջանցիների զինված խմբավորումներից ազատագրել Շուշին:

Օպերացիան սկսվեց 1992 թվականի մայիսի 8-ի գիշերը՝ 02:45-ին: Շուշին պաշտպանում էր մինչև ատամները զինված 2500 ադրբեջանցի զինվորական: Հայկական կողմից հարձակմանը մասնակցում էր 3800 կամավոր՝ Արցախի ինքնապաշտպանական ուժերի հրամանատար

Արկաղի Թադևոսյանի գլխավորությամբ: Ճակատը եղել է 45 կմ: Հարձակումն իրականացվել է մի քանի ուղղություններով:

Հայ մարտիկների բարձր բարոյական ոգին, Ստեփանակերտի խաղաղ բնակչությանը փրկելու անհրաժեշտության գիտակցումը թույլ տվեցին օպերացիան ավարտել ամենակարճ ժամկետներում: Այն շարունակվեց 26 ժամ: Արդեն մայիսի 9-ի առավոտյան՝ 04:00-ին, Տեր-Թադևոսյանը հայտարարեց՝ հակառակորդի բոլոր խմբավորումները լքել են Շուշին: Կայծակնային արագությամբ իրականացված օպերացիան թույլ տվեց այն անցկացնել նվազագույն մարդկային կորուստներով: Հայկական կողմը կորցրեց 58 մարտիկ, ադրբեջանական կողմը՝ շուրջ 200:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

ԼՂՀ-ում ավարտվեցին խորհրդարանական ընտրությունները

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում այսօր՝ մայիսի 3-ին, ժամը 20.00-ին փակվել են 278 ընտրատեղամասերի դռները, որոնցից մեկը՝ քրեակատարողական հիմնարկում: Եվս մեկ ընտրատեղամաս բացվել է Երեւանում՝ ՀՀ-ում ԼՂՀ ներկայացուցչության շենքում (Փոտոռեպորտաժ):

Ընդհանուր առմամբ ԼՂՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը ձեւավորել է 12 ընտրատարածք, որոնցից մեկը՝ Հայաստանում:

Դիտորդների կարծիքով, ընդհանուր առմամբ, քվեարկության արդյունքում խախտումներ չեն գրանցվել:

Հիշեցնենք, որ ընտրություններին հետևել են 110 դիտորդներ տարբեր երկրներից:

ԼՂՀ ԱԺ 33 մանդատների համար պայքարում են համամասնական համակարգով 7 քաղաքական կուսակցություններ՝ «Ազատ հայրենիք» (50 մարդ), «Ազգային վերածնունդ» (14 մարդ), «Արցախի ժողովրդավարական կուսակցություն» (35 մարդ), Լեռնային Ղարաբաղի կոմունիստական կուսակցություն (14 մարդ), «Խաղաղություն եւ զարգացում» (6 մարդ), ՀՅԴ (34 մարդ) եւ «Շարժում 88» (14 մարդ):

Մեծամասնական ընտրակարգով առաջադրվել է 50 թեկնածու, որոնցից 27-ը ինքնաառաջադրվածներ են: Երեք թեկնածու առաջադրել է ՀՅԴ-ն, 4-ական թեկնածուներ՝ «Ազատ Հայրենիքը» եւ Արցախի ժողովրդավարական կուսակցությունը, 5 թեկնածու՝ «Ազգային վերածնունդը», 7 թեկնածու՝ «Շարժում 88»-ը: Մեծամասնական ընտրակարգով առաջադրվածներից 34-ն անկուսակցական են:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Ընտրությունները համապատասխան են միջազգային չափանիշներին. Հունաստանից Արցախ ժամանած դիտորդ

ԼՂՀ խորհրդարանական ընտրություններն անցնում են հանգիստ, առանց միջադեպերի, միջազգային չափանիշներին համապատասխան: Այս մասին այսօր՝ մայիսի 3-ին, լրագրողների հետ գրույցում ասաց Հունաստանից ժամանած դիտորդ Էրսի Քոլին՝ նշելով, որ ինքը կարծիք է կազմել Ստեփանակերտի 9 տեղամասերում լինելով, ամբողջ գործընթացի մասին խոսել չի կարող:

⁸ - ՀՄՍ Հ ՊԿՊԱ. Քաղվածքների Ֆոնդ, գ. 43, թ. 48 (Պրոֆ. Ջոն Կիրակոսյան, Հայաստանը Միջազգային դիվանագիտության եւ Սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում 1828-1923, Երևան 1972, էջ 402-403):

⁹ - ՀԺՊ, հ. 7, էջ 102:



«Մենք գնում ենք պատահական ընտրատեղամասեր, կես ժամ մնում եւ նշումներ ենք անում գործընթացի վերաբերյալ: Ես եղել եմ միայն մի քանի տեղամասերում շատ լավ էր ընթանում գործընթացը, մենք ուրախ ենք, թե ինչքան բան ենք տեսել»,- ասաց նա՝ նշելով, որ եթե անգամ աշխարհի շատ երկրներ չեն ճանաչում ընտրությունները, կարելու է, որ գործընթացը լավ է անցնում:

Էրսի Քոին առաջին անգամ է Արցախում, նա նշեց, որ տպավորված է տեսարժան վայրերով. «Շատ լավ տեսարան է, հիանալի լեռներ կան, անտառներ: Ինքս երբեք չէի եղել Կովկասյան լեռներում: Շատ տպավորված եմ երկրի գեղեցկությամբ»:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Տպավորված եմ ժողովրդավարական գործընթացով. Բունդեսթագի պատգամավորն Արցախում է



Գերմանիայի Բունդեսթագի պատգամավոր Ալբերտ Վայերը տպավորված է Արցախում տեղի ունեցող ժողովրդավարության գործընթացով: Այս մասին այսօր՝ մայիսի 3-ին, լրագրողների հետ զրույցում ասաց պատգամավորը, որն Արցախ է ժամանել խորհրդարանական ընտրություններին որպես դիտորդ մասնակցելու համար:

«Երկրորդ անգամն է, որ այստեղ եմ, շատ մարդկանց եմ հանդիպել, տպավորված եմ ժողովրդավարական գործընթացով: Ընտրությունները շատ լավ են անցնում, բայց ԼՂՀ միջազգային ճանաչումը միայն ընտրություններով չէ պայմանավորված: Լեռնային Ղարաբաղը չի կարող միայնակ հասնել միջազգային ճանաչման, պետք բազմաթիվ բանակցություններ ընթանան այլ՝ հատկապես հարեւան երկրների հետ: Դա դժվար հարց է, սակայն անհրաժեշտ»,- ասաց պատգամավորը:

Պատգամավորը նշեց, որ հետևում է դարաբաղադրեչանական շփման գծում սահմանային միջադեպերին, տեղակ է նաև ուղղաթիռի կործանման դեպքից. «Սահմանային միջադեպերը բացասական եմ գնահատում,

կարծում եմ, որ մենք պետք է կարողանանք մեր աջակցությունը ցուցաբերել»:

Ալբերտ Վայերը նշեց նաև, որ մայիսի 20-ին հայ-գերմանական ֆորում կկայանա, որի ընթացքում այլ հարցերի հետ կքննարկվի նաև Լեռնային Ղարաբաղի խնդիրը:

Նշենք, որ այսօր անցկացվող՝ ԼՂՀ խորհրդարանական ընտրություններին մասնակցում են ավելի քան 100 միջազգային դիտորդներ՝ եվրոպական երկրներից, ԱՄՆ-ից, դիտորդներ Հայաստանից:

Լուսանկարը՝ Արսեն Սարգսյանի/NEWS.am

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Արցախի ԿԸՀ-ն հրապարակել է ընտրությունների արձանագրությունը



Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հրապարակել է մայիսի 3-ին կայացած խորհրդարանական ընտրությունների համամասնական ընտրակարգի ամփոփիչ արձանագրությունը:

Ըստ արձանագրության՝ ընտրողների ընդհանուր թիվը կազմել է 102 042 մարդ, քվեարկությանը մասնակցել է 72 296 մարդ կամ ընտրողների 70,8 տոկոսը: Ընտրական հանձնաժողովներին տրվել է 103 699 քվեաթերթիկ, մարվել է 31 401 քվեաթերթիկ, անվավեր է ճանաչվել 3380-ը (4,7%): Չայները բաշխվել են. «Ազատ հայրենիք»՝ 32632 (47,35%), «Ազգային վերածնունդ»՝ 3709 (5,38%), Արցախի Ժողովրդավարական կուսակցություն՝ 13105 (19,01%), ԼՂ Կոմկուս՝ 1136 (1,65%), «Խաղաղություն եւ զարգացում»՝ 591 (0,86%), «ՅԶԴ՝ 12965 (18,81%), «Շարժում-88»՝ 4778 (6,93%):

Անճշտությունների թիվը՝ 15:

Ստորագրվեց Հայաստանի եւ ԱՄՆ միջեւ առևտրի եւ ներդրումների համաձայնագիրը

Մայիսի 7-ին նախագահ Սերժ Սարգսյանի գլխավորած պատվիրակության կազմում Վաշինգտոնում գտնվող ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը եւ ԱՄՆ առևտրի ներկայացուցչի տեղակալ Դեն Մուլանին՝ ՀՀ Նախագահի ներկայությամբ, ստորագրեցին Հայաստանի Հանրապետության եւ Ամերիկայի Միացյալ Նահանգների միջեւ Առևտրի եւ ներդրումների շրջանակային համաձայնագիրը:

Հայաստանը եւ Միացյալ Նահանգները, ըստ փաստաթղթի, հավաստում են իրենց մտադրությունը՝ ստեղծելու բարենպաստ պայմաններ ներդրումների եւ երկու երկրների միջեւ ապրանքաշրջանառության, առևտրի խրախուսման համար:



Շուշին ազատագրելը խնդիր չի եղել, մեզ մնում էր շքերթով մտնել քաղաք. Դալիբալթայան



Նախատեսվում է ձեռավորել Առեւտրի եւ ներդրումների հայ-ամերիկյան խորհուրդ, որի հանդիպումներն անց են կացվելու առնվազն տարին մեկ անգամ: Խորհուրդը կոչված է՝ բացահայտելու երկկողմ ներդրումների եւ առեւտրի նոր ոլորտներ եւ աշխատանքներ տանելու դրանց զարգացման ու այդ ճանապարհին հնարավոր խոչընդոտների վերացման ուղղությամբ:

Հայաստանում ցանկանում են հստակեցնել 70 հազար օտարերկրացիների աշխատանքի կարգը



Հայաստանում պատարաստվում են հստակեցնել օտարերկրացիների աշխատանքի կարգը: «Օտարերկրացիների մասին» օրենքում փոփոխությունների համապատասխան նախագիծը խորհրդարանում մայիսի 7-ին ներկայացրել է աշխատանքի փոխնախարար Արայիկ Պետրոսյանը:

Օրինագիծը նախատեսում է, որ օտարերկրացիները պետք է աշխատանքի թույլտվություն ներկայացնեն կեցության կարգավիճակի փաստաթղթի հետ մեկտեղ:

60 օրվա ընթացքում գործատուն պարտավոր է պայմանագրերը ներկայացնել լիազոր մարմնին՝ հաշվառման համար:

Բացի այդ, օտարերկրացիներին աշխատանքի հրավիրելուց առաջ գործատուն պետք է զբաղվածության պետական ծառայություն դիմի եւ հարցում անի՝ արդյոք Հայաստանում կան համապատասխան մասնագետներ: Միայն մեկ ամսվա ընթացքում դրական պատասխանի դեպքում ընկերությունը կարող է օտարերկրացի մասնագետ հրավիրել:

Պետրոսյանի տվյալներով, այսօր Հայաստանում աշխատում են 70 հազար օտարերկրացիներ:

Շուշին ազատագրելը խնդիր չի եղել, բոլոր նախապատրաստական աշխատանքներն իրականացնելուց հետո մնում էր միայն շքերթով մտնել Շուշի: Այս մասին այսօր՝ մայիսի 7-ին, լրագրողների հետ գրույցում ասաց 1991-92թթ. Հայաստանի պաշտպանության նախարարի առաջին տեղակալ, Չինված ուժերի գլխավոր շտաբի պետ, զեներալ-գեղապետ, ներկայումս ՊՆ խորհրդական Գուրգեն Դալիբալթայանը:

«Հպարտ եմ, որ այդ մարտական գործողությունների մասնակիցն եմ եղել: Հայաստանը միշտ կորցրել է իր տարածքները: Մենք այնպիսի աշխարհագրական դիրք ունենք, որ օտար զավթողները միշտ հետաքրքրվել են մեր տարածքով եւ միշտ դժբախտության մեջ ենք եղել: Ինձ բախտ է վիճակվել մասնակից լինել այդ մարտական գործողություններին: Հպարտ եմ, որ իմ գիտելիքներն ու ունակությունները պետք է եկել մեր ազգին սպառնացող մարտահրավերը կասեցնելու գործում», - ասաց Գուրգեն Դալիբալթայանը՝ նշելով, որ ինքը մայիսի առաջին օրերը երբեք չի մոռանում:

Նա հիշեց, որ Շուշիի ազատագրման օրն իրենք խորամանկորեն «բանդաներից» մաքրել էին Շուշի տանող բոլոր մուտքերը եւ մնում էր ընդամենը շքերթով մտնել Շուշի. «Ճիշտ է՝ դա մեզ այնքան էլ հեշտ չտրվեց, բայց շատ հպարտ եմ, որ մենք բոլոր մարտահրավերները կատարեցինք նվազագույն մարդկային կորուստներով: Մեր նպատակն այն էր, որ քիչ հայեր կորցնեինք եւ կարծում եմ, որ դա մեզ հաջողվեց»:

Դալիբալթայանի խոսքով՝ ճիշտ որոշում է եղել մարտական գործողությունները Ղարաբաղի կողմից իրականացնելը, քաղաքական գործիչներն էլ են այդ հարցում իրենց հետո կողմնակից եղել:

«Մեզ ոչ ոք չի կարող մեղադրել, որ մենք ագրեսորներ ենք, քանի որ Ադրբեջանին պատերազմ ենք հայտարարել: Ոչ, մենք մաքրել ենք մեր երկիրը կեղտից: Եվ այսօր ունենք կայացած բանակ, որը թեւեւ խնդիրներ ունի, բայց պատրաստ է կատարել իր առջեւ դրված խնդիրները, մասնավորապես պաշտպանել հայրենիքը», - ասաց նա:

Դալիբալթայանի հետ լրագրողների հետ հանդիպմանը եկել էր նաեւ «Հայաստանի հանրագիտարան» հրատարակչության գլխավոր խմբագիր Հովհաննես Այվազյանը, որը Գուրգեն Դալիբալթայանի մարտական կենսագրության հեղինակն է:

«Այս գործողությանն ամբողջ Հայաստանը եւ Ղարաբաղն էր սպասում: Դրա համար ազատագրման լուրը չէր կարող քարի տակ մնալ, միանգամից տարածվեց, որ Շուշին արդեն ազատագրված է, իսկ հատուկ պաշտոնական հաղորդագրություն եղավ ավելի ուշ», - նշեց նա:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Թուրքագետ Այս տարի Ցեղասպանությունը ճանաչող երկրների թիվը կավելանա



Քաղաքական առումով աշխարհում Հայոց ցեղասպանության հարցում սկզբունքային փոփոխություն է տեղի ունեցել: Խոսքը տարբեր երկրների խորհրդարանների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման մասին է: Այս մասին մայիսի 7-ին կայացած մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարեց ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի տնօրեն, թուրքագետ Ռուբեն Մաֆրաստյանը:

Նա գրեթե կասկածներ չուն, որ այս տարի կավելանա Հայոց ցեղասպանությունը ճանաչած երկրների թիվը: Նրա խոսքով մայիսի 6-ին Ցեղասպանությունը ճանաչած Լյուքսեմբուրգը փոքր երկիր է, բայց դա ԵՄ անդամ հիմնական երկրներից է և ԵՄ հիմնադիր պետությունը: «Համաձայն թուրքական մամուլի՝ Թուրքիան շոկի մեջ է հայտնվել այն բանից հետո, երբ, Լյուքսեմբուրգը ճանաչել է Հայոց ցեղասպանությունը», - նշեց Ռուբեն Մաֆրաստյանը: Անդրադառնալով Հայոց ցեղասպանության 100-ամյակին նվիրված միջոցառումներին՝ նա նշեց. «Մենք տեսանք, որ ժամանակակից քաղաքակիրթ աշխարհի մեծ մասը մեզ հետ կիսում էր մեր ցավը: Մենք տեսանք, որ աշխարհում հայությունը լուրջ գործոն է, որ մեր ձայնը լսելի է աշխարհում: Պետք է նշեն, որ այդ միջոցառումները կրում են ոչ միայն քաղաքական, այլ նաև մշակութային բնույթ, քանի որ միլիոնավոր մարդկանց սրտերին կարելի է հասնել ոչ թե քաղաքական գնահատականների, այլ մշակութային լեզվի միջոցով»:

Մաֆրաստյանի խոսքով՝ Թուրքիայի խնդիրն է հակազդել Հայոց ցեղասպանության ճանաչմանը՝ օգտագործելով քարոզչության տարբեր միջոցներ: «Սակայն, ինչպես մենք տեսանք, դա հաջողությամբ չի պսակվում: Գալիպոլիի միջոցառումները չտվեցին այն արդյունքը, որն սկսնկալում էր թուրքական կողմը», - նշեց թուրքագետը:

[Լուրեր Հայաստանից - NEWS.am](http://www.news.am)

ԱԳՆ. Հայաստանը ողջունում է Լյուքսեմբուրգի խորհրդարանի որոշումը

Շարունակվում է միջազգային հանրության կողմից Հայոց ցեղասպանության փաստի ճանաչման անշրջելի գործընթացը:

ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը հայտարարություն է տարածել՝ Լյուքսեմբուրգի խորհրդարանի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ:

«Հայաստանը ողջունում է Լյուքսեմբուրգի պատգամավորների պալատի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ բանաձեռի միաձայն ընդունումը:



Լյուքսեմբուրգի խորհրդարանը, հարգանքի տուրք մատուցելով Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին, ընդգծում է, որ մեկ դար առաջ Օսմանյան կայսրությունում հայերի դեմ իրականացվածը հենց ցեղասպանություն է, և կոչ անում Թուրքիայի իշխանություններին առերեսվել սեփական պատմությանը:

Այս բանաձեռի ընդունմամբ Լյուքսեմբուրգը համալրեց Ցեղասպանությունը ճանաչած երկրների շարքը և իր կարևոր ներդրումը բերեց մարդկության դեմ նոր հանցագործությունների կանխարգելման վեհ գործին», - ասվում է Նալբանդյանի ուղերձում:

Ինչպես ավելի վաղ հայտնել էր NEWS.am-ը, Լյուքսեմբուրգի Մեծ Դքսության խորհրդարանը միաձայն ընդունել է Հայոց Ցեղասպանությունը ճանաչող բանաձեռ:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Թուրքիան հետ է կանչել Լյուքսեմբուրգում իր դեսպանին



Թուրքիայի ԱԳՆ-ը հայտարարություն է տարածել Լյուքսեմբուրգի խորհրդարանի կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչող որոշման հետ կապված:

Թուրքական Timeturk-ի փոխանցմամբ՝ Թուրքիայի ԱԳՆ-ն հայտարարել է, թե խստորեն դատապարտում է Լյուքսեմբուրգի խորհրդարանի կողմից 1915-ը ցեղասպանություն անվանող որոշումը:

ԱԳՆ-ի հայտարարության մեջ նշվել է, թե խնդրի հետ կապված իրենց տեսակետները հայտնել են են Թուրքիայի ԱԳՆ կանչված Անկարայում Լյուքսեմբուրգի դեսպանին, ինչպես նաև հետ է կանչվել Լյուքսեմբուրգում Թուրքիայի դեսպան Լեւենթ Շահինբայան:

Նշենք, որ մայիսի 6-ին Լյուքսեմբուրգի խորհրդարանը 1915-ին հայերի դեմ իրականացված կոտորածը Ցեղասպանություն էր որակել և կոչ արել Թուրքիային ճանաչել ցեղասպանությունը:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Թուրքագետ. Գերմանիայում որոշ քաղաքական ուժեր հաշվի են նստում թուրքական գործոնի հետ



Թուրքական գործոնը Գերմանիայում ուժեղ է եւ այդ գործոնի հետ հաշվի են նստում երկրի որոշակի քաղաքական ուժեր: Այս մասին, այսօր՝ մայիսի 7-ին, մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարել է Հայաստանի ԳԱԱ արեւելագիտության ինստիտուտի տնօրեն, թուրքագետ Ռուբեն Սաֆրաստյանը:

Նրա խոսքով, Գերմանիայում թուրքերի ճնշումը որոշակի արդյունք է տալիս: «Մյուս կողմից, մենք տեսանք, որ առաջին անգամ Գերմանիայում քաղաքական ուժերը Բունդեսթագում շատ հստակ դատապարտեցին Հայոց ցեղասպանությունը: Կարծում եմ, որ մինչեւ հունիսի 30-ը Հայոց ցեղասպանության մասին օրինագիծը կդրվի քննարկման, սակայն չեմ կարող ասել, թե ինչպիսին կլինի բանաեւի վերջնական տեսքը, մասնավորապես, վերնագիրը», - նշել է Սաֆրաստյանը:

Հիշեցնենք, որ Հայոց ցեղասպանության մասին Բունդեսթագում ներկայացված բանաձեւի նախագիծն ուղարկվել է խորհրդարանի հանձնաժողովներին՝ հետագա քննարկումների համար: Գերմանիայի խորհրդարանը բանաձեւը պետք է ընդունի նախքան ամառային արձակուրդները:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Տոլման հայկական, այլ ոչ թե թուրքական կերակրատեսակ է. Սեդրակ Մամուլյան



Թուրքերի այն պնդումը, որ տոլման թուրքական կերակրատեսակ է, չի համապատասխանում իրականությանը: Այս մասին այսօր՝ մայիսի 13-ին, լրագրողների հետ զրույցում ասաց «Հայ խոհարարական ավանդույթների զարգացման և պահպանման» ՀԿ նախագահ Սեդրակ Մամուլյանը:

«Ինչի՞ թուրքը չի պնդում, որ բաստուրման իրենցն է, որովհետեւ բաստուրման իրոք քոչվոր ժողովուրդներին պատկանող կերակրատեսակ է, եւ իրենցն է: Մենք ուսումնասիրել ենք եւ պարզել, որ տոլմա բառը առաջացել է տոլի բառից, որը նշանակում է խաղողի տերեւ: Եւ մենք դրա

ապացույցը ունենք: Մեղրիում մի կերակուր է շրջանառվում, որը կոչվում տոլմա խաշու եւ տոլմայի հետ կապ ունի այնքանով, որ խաղողի մատղաշ տերեւով ապուր է: Եվ վերջապես Դալմայի այգիներ, որը նշանակում է խաղողի այգիներ: Սա նշանակում է, որ տոլմա բառը հայկական բառ է», - ասաց նա:

Նշենք, որ մայիսի 16-ին Մուսա Լեռ հուշահամալիրում կանցկացվի արդեն ամենամյա դարձած տոլմայի փառատոն:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Գերմանական Մայնցի խորհրդարանը Ցեղասպանությունը դատապարտող բանաձեւ է ներկայացրել



Մայիսի 12-ին Գերմանիայի Ռայնլանդ Փֆալց դաշնային հողի խորհրդարանը Հայոց ցեղասպանության 100-ամյակի կապակցությամբ ցեղասպանությունը դատապարտող համատեղ բանաձեւ է ներկայացրել:

Մայրաքաղաք Մայնցում խորհրդարանի բոլոր խմբակցությունները Օսմանյան կայսրությունում 1915թ. կատարվածը բնութագրելու համար օգտագործել են ցեղասպանություն եզրը: Բանաձեւում մասնավորապես ասվում է.

«Գերմանիայի նախագահ Յոախիմ Գաուկը, Բունդեսթագի նախագահ Նորբերթ Լամերթն ու Բունդեսթագի բոլոր խմբակցությունների ներկայացուցիչները իրենց ելույթում հուզիչ բառերով հստակ նշեցին այս տարեկիցի նշանակությունը: Մենք բոլորս պետք է կրենք այս Ցեղասպանության պատմական պատասխանատվությունը, հատկապես գերմանական ռեյխի ունեցած դերի ենթատեքստում: Այդ պատճառով մենք ներկայացնում ենք այս համատեղ բանաձեւը: Խոսքը ոչ միայն զոհերին հիշելու, այլ առաջ նայելու անհրաժեշտության մասին է: Մեր համատեղ նպատակն է հասնել հաշտության, փոխըմբռնման եւ ճանաչման: Այդ պատճառով մենք կողմ ենք հայ-թուրքական հարաբերությունների զարգացմանը: Բանաձեւը կոչ է անում հիշել 100 տարի առաջ տեղի ունեցած Հայոց ցեղասպանության մասին: Խորհրդարանի խմբակցությունները դատապարտում են Օսմանյան կայսրության արարքը, որը հանգեցրեց 1.5 մլն հայերի բնաջնջման: Խմբակցությունները ցավում են դրանում Գերմանական ռեյխի ունեցած անփառունակ դերակատարման համար, որը, չնայած սպանությունների եւ տեղահանությունների մասին ունեցած հստակ տեղեկություններին, չփորձեց վերջ դնել մարդկության դեմ իրականացված այդ հանցագործությանը: Խորհրդարանական ուժերը հավատարիմ են մնում հայ-

թուրքական հաշտեցման իրենց որոշմանը: Հենց այդ պատճառով մենք կոչ ենք անում Ռայնլանդ Փֆալցի դաշնային կառավարությանը խրախուսել 1915/1916թթ. դեպքերի առերեսման ուղղված բոլոր ջանքերն ու նախաձեռնությունները եւ հետեւողական լինել Գերմանիայի պատասխանատվության բաժինը ընդունելու հարցում»,- մեջբերում է բանաձեւի տեքստը [RheinZeitung](#)-ը:

Արեւմտյան Հայաստան

Ստամբուլում 12 դերսիմահայ են մկրտվել եւ դարձել քրիստոնյա



Ստամբուլի Սուրբ Ստեփանոս հայկական եկեղեցում 12 դերսիմահայի մկրտություն է տեղի ունեցել: Ինչպես տեղեկացնում է Ստամբուլի հայկական «Ակոս»-ը, քրիստոնեության վերաբերյալ 6 ամսվա դասընթացներից հետո մայիսի 9-ին, Ստամբուլի Յեշիլքյոյի Սուրբ Ստեփանոս եկեղեցում 12 դերսիմահայ մկրտվել են եւ պաշտոնապես դարձել քրիստոնյա: Մկրտվածները հայտնել են, որ շատ երջանիկ են իրենց պապերի կրոնին վերադառնալու համար՝ շեշտելով, որ այսուհետ ազատ արտահայտվելու են, որ քրիստոնյա են:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Ստամբուլում հայերին պատկանած հայկական որբանոցը ցանկանում են վաճառել հայերին



Թուրքա հայտնի մտավորական Բասքըն Օրանը զավեշտալի է համարել, որ Ստամբուլի «Քամփ Արմեն» անունով հայտնի հայկական որբանոցի սեփականատերը հայտարարել է, թե այն կվաճառի հայերին:

Թուրքական T24.com կայքում ներկայացված հրապարակման մեջ Բասքըն Օրանն անդրադարձել է «Քամփ Արմենի» խնդրին, հիշատակելով, որ հայերին պատկանած եւ հետագայում իլված մանկատունը քանդելուն զուգահեռ Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանն «աչքալուսանք» է տվել հայերին՝ հայտնելով, թե հայերենով Ղուրան է լույս տեսել: Բասքըն Օրանն ուշադրություն է դարձրել այն հանգամանքին, որ հայերին պատկանած «Քամփ Արմենի» ներկայիս «սեփականատերը» հայտարարում է, որ եթե հայերը գնեն մանկատունը, ինքը չի քանդի: Նշենք, որ հիշյալ մանկատանն են մեծացել Հրանտ Դինքը եւ նրա կինը՝ Ռաքել Դինքը:

Միսի կաթողիկոսության կալվածքի վերադարձի դատը դյուրին չի լինելու. Արամ Ա



Միսի Կաթողիկոսարանի պատմական կալվածքի վերադարձի գծով Թուրքիայի Սահմանադրական դատարանում բացված գործընթացը պատմական եզակի կարևորություն ունեցող դատ է: Այս մասին, մայիսի 13-ի երեկոյան, ԱՄՆ Նյու Ջերսիի հայ համայնքի շուրջ 100 պատասխանատուների հետ հանդիպման ժամանակ նշել է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ն: «Զմոռանանք, որ 100 տարվա ընթացքում առաջին անգամ մեր եկեղեցին՝ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության միջոցով իրավական քայլի է դիմում: Արեւմտյան Հայաստանում ու Կիլիկիայում բազմաթիվ եկեղեցիներ, վանքեր, եկեղեցապատկան ու ազգապատկան կալվածքներ դեռ մնում են բռնագրավված ցեղասպան թուրքի կողմից: Խոսքից գործի անցնելով մեր Սուրբ Աթոռը նախաձեռնողը եղավ իրավական քայլի դիմելով: Բնականաբար դյուրին չէր այս քայլը եւ դյուրին չի լինելու առաջիկա գործընթացը, սակայն, մեր ազգային պահանջատիրության շրջագծում կալվածքների վերադարձը կարևոր բնագավառ է՝ ուր մենք ահավասիկ փորձում ենք մուտք գործել: Ծիշտ է որ իրավական այս թղթածրարը ներկայացնում է Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը, բայց սա մասնակի դատ չէ, դրա իրավատերը մեր եկեղեցին է, Հայաստանն է ու ամբողջ հայությունը: Այս գիտակցությամբ է, որ ուզում ենք մեր ժողովուրդը մոտենա այս դատին: Նաեւ չմոռանանք, որ հսկա աղմուկ հանեց մեր այս դատը թե թուրքական, թե միջազգային շրջանակներում: Մեր ազգային պահանջատիրության առումով որքան այս իրավական քայլը կարեւոր է՝ նույնքան էլ կարեւոր է նրա առաջացրած հակազդեցությունը»,- ընդգծել է Արամ Ա-ն:

Հայոց ցեղասպանությունը և համշենցիները



Համշենահայ Մահիր Օզքանը Հայոց ցեղասպանության վերաբերյալ համշենցիների տեսակետներն է ներկայացրել, ըը ներկայացնում ենք Akunq.net-ի թարգմանությամբ:

Էթնիկ ինքնությունները բազմաշերտ են: Այդ բազմաշերտության պատճառն այն է, որ ինքնությունը կազմավորող բազմաթիվ փոփոխականներ կան, և որ այդ փոփոխականները տարբեր մակարդակներում են փոխադարձություն գտնում իրենց որևէ էթնիկ ինքնությամբ բնորոշող մարդկանց մեջ: Այդ պատճառով որևէ էթնիկ ինքնության ընդհանուր առանձնահատկություններից՝ ժամանակ առ ժամանակ որոշիչը հանդիսացող մի առանձնահատկություն չկողո որևէ անհատ անգամ կարողանում է իրեն բնորոշել ինքնության մյուս առանձնահատկություններով: Էթնիկ ինքնության որոշիչ տարրը տարբերվում է՝ ըստ պատմական դարաշրջանների, էթնիկ խմբի առանձնահատկությունների, աշխարհագրության և բազմաթիվ այլ փոփոխականների: Այդ փոփոխականները կարելի է թվարկել որպես այնպիսի մշակութային տարրեր, ինչպիսիք են՝ լեզուն, ենթադրելի կամ իրական ցեղային կապը, կրոնը, ընդհանուր տարածքին պատկանելու զգացումը, սովորույթներն ու ավանդույթները, արժեքային համակարգը:

Այն ժամանակաշրջանում, երբ տեղի էր ունենում Հայոց ցեղասպանությունը, համշենցիները կրոնական տեսանկյունից սպրույն էին որպես երկու առանձին հանրություն՝ մահմեդական համշենցիներ և քրիստոնյա համշենցիներ: Այդ տարբերությունը որոշիչ է եղել այդ երկու խմբի՝ Հայոց ցեղասպանության գործընթացում գտնված դրության առումով: Տվյալ ժամանակաշրջանում կրոնական տարրն ընդունվել է որպես ամենակարևոր գործոն: Կարելի է ասել, որ Յեղասպանության ժամանակ և Թուրքիայի Համարյանության հիմնվելու ընթացքում բոլոր էթնիկ ինքնությունները հիմնականում գործել են՝ իրենց կրոնական ինքնության համաձայն: Ավելի ճիշտ, կարելի է ասել, որ թուրքական ազգայնական շարժումը կարողացել է այնպես անել, որ բոլոր մուսուլման ժողովուրդները շարժվեն՝ իրենց կարիքների շրջանակներում: Կարող ենք արձանագրել, որ այդ վիճակը համագեցրել է նրան, որ չնայած քրիստոնյա համշենցիները մյուս հայերի հետ կիսել են նույն ճակատագիրը, սակայն մահմեդական համշենցիների կացությունը շատ ավելի բարդ է եղել:

Ինչ է պատահել քրիստոնյա համշենցիներին Շատ քան կարելի է գրել այն մասին, թե ինչեր են եկել քրիստոնյա համշենցիների գլխին: Մակայն սույն հոդվածի հիմնվելու ընթացքում դա չէ: Եթե կարճ կապենք, ապա կարող ենք արձանագրել, որ քրիստոնյա համշենցիները կիսել են այն ճակատագիրը, որը Յեղասպանության ժամանակ բաժին էր ընկել ամբողջ Թուրքիայի հայերին: Մինչև 1915-ը Համշենից դեպի արևմուտք՝ Մամսուն, տարածված քրիստոնյա համշենցիները եւս ենթարկվել են կոտորածների: Ողջ մնացածների մեծ մասն անցել է Սև ծովի մյուս ափ: Ներկայում նրանք իրենց գոյությունը պահպանում են Ռուսաստանի այնպիսի քաղաքներում, որպիսիք են՝ Մոսկին,

Կրասնոդարը, Վորոնեժը, Ռոստովը, ինչպես նաև՝ Աբխազիայի Սուխում և Գագրա քաղաքները:

Մահմեդական համշենցիներ՝ թե՛ դահիճ, թե՛ գոհ Հարկ է ընդունել, որ Հայոց ցեղասպանությունը բեկում մտցնող ամենակարևոր դեպքն է եղել՝ մուսուլման համշենցիների ինքնաընկալման առումով: Յեղասպանությունը պատճառ է դարձել, որ մուսուլմանացած համշենցիները ձգտեն խզել իրենց կապերը ոչ մուսուլման համշենցիների և հետևապես՝ հայության հետ: Կարելի է ենթադրել, որ համշենցիների մեջ տարածված՝ հայկական ծագման ժխտումը և կամավոր ուժացման հակումը մեծամասամբ զարգացել է Յեղասպանությունից հետո ընկած ժամանակաշրջանում: Հանրապետական շրջանի ասիմիլացիոն քաղաքականությունն էլ ավելի է ազդել այդ դրության վրա: Յեղասպանության ժամանակաշրջանում Օսմանյան կայսրության՝ կրոնի վրա հիմնված միլիթների համակարգը դեռևս շարունակում էր իր ազդեցությունը պահպանել: Հետևաբար, բոլոր մահմեդական ոչ թուրք ժողովուրդները հիմնականում իրենց համարում էին մեկ միլիթ կամ ումմա: Մուսուլման համշենցիները նույնպես ըստ այդմ են որոշել, թե որ դասին են պատկանում: Մակայն այն փաստը, որ նրանց ինքնությունն առջևում է հայկական ինքնությանը, բարդացրել է այդ ընտրության հետևանքները: Հայկական ինքնության նկատմամբ թշնամական դիրք բռնելը, համշենցիների՝ կրոնական ինքնության պատճառով հայերի դեմ դուրս գալը պատճառ է դարձել, որ նրանք զգայուն դառնան իրենց հայկական անցյալի վերաբերյալ քննարկումների հանդեպ: Այն, որ ներկայում համշենցիները, Թուրքիայի սևծովյան շրջանում ապրող մյուս ժողովուրդների հետ համեմատած, համեմատաբար ավելի դժվար են ընդգրկվում սեփական ինքնության մասին քննարկումների մեջ, առավելապես պայմանավորված է այն ավերով, որ նրանց ինքնության հարցում գործել է Յեղասպանությունը:

Իրենց, որպես մուսուլման, Յեղասպանության իրագործողների մեջ տեսնող համշենցիները գոհի կարգավիճակում են հետևյալ առումներով. այդ դեպքերը ստիպել են, որ նրանք խզեն իրենց կապը հայկական ինքնության հետ և ժխտեն այն: Նման գոհ լինելն ի հայտ է գալիս զանազան վախերի, հակասականությունների և հարձակողական դիրքի միջոցով: Այդ դրությունը նկատելու համար բավարար կլինի, եթե հայացք գցենք համշենական լեզվի և ինքնության վերաբերյալ ուսումնասիրությունների ավելացմանը զուգահեռ՝ վերջին շրջանում սոցիալական ցանցերում շատացած՝ ինքնության վերաբերյալ քննարկումներին: Յեղասպանության ցանցում Հ.Հ. անվամբ մի պրոֆիլ, ձգտելով ապացուցել, որ համշենցիները հայ չեն, գրում է. «Մի շատ հին գրքում գրված է, որ Խոսրոսի համշենցիները գույում են արել հայերի գլխին: Նույնիսկ ես էի նախկինում նման բանը լսում մեր մեծերից: Համշենցի ավագանիները շատ քան են քաշել տվել հայերին: Նրանք կարծես թե մեր պատճառով են փախել... Մենք գլուխ չենք գոլում այդ գույումի համար: Իրական անբարոյականությունն այն է, որ այս տարածքներում ապրող ժողովուրդներին միմյանց հանդեպ թշնամացնելով՝ ապահովել են, որ նրանք տարիներ շարունակ հետ մնան այդ թշնամության պատճառով... Համշենական լեզու գոյություն ունի: Այո՛, դա ասում եմ չիմացողների համար, առաջին անգամ համշեներենով խոսք լսողների համար: ՀԱՄՇԵՆԱԿԱՆ ԼԵՃՈՒ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՌԻՆԻ: Այդ լեզուն հնարավոր չէ ոչ հայերենով բնորոշել, ոչ էլ՝ մեկ այլ բանով: Ես գիտեմ համշեներեն. չեմ կարող դա ժխտել: Այդ լեզուն սովորել եմ՝ հայերի հետ միասին ապրելու պատճառով»: Ինչպես տեսնում ենք, այստեղ բերված հիմնական փաստարկը հետևյալն է՝ «Եթե հայ ենք, ապա ինչու՞ ենք գույում արել հայերի գլխին»: Երբ նկատի ենք առնում, որ նման խոսքեր ասողները, ընդհանուր առմամբ, քաղաքական հակվածությամբ թուրք ազգայնականներ են լինում, իրավիճակն ավելի ուշագրավ է դառնում: Սովորաբար Հայոց ցեղասպանությունը մերժող այդ անձինք, երբ խնդիրը իրենց հայ լինելը մերժել են լինում, որպես ապացույց բերում են այն, որ համշենցիները գույում են արել հայերի նկատմամբ: Այսինքն, երբ հարցը հայ նախահայրերին տեղ կանգնեցնում է հասնում, հայերի հանդեպ գույում անելու փաստը նախընտրում են: Բակ այն իրողությունը, որն անտեսում են, հետևյալն է. իրենց պապերը երբ անում էին այդ գույումը, վարվում էին՝ ելնելով ոչ թե իրենց հայկական, այլ մահմեդական ինքնությունից, քանի որ հայկական ինքնությունը համարժեք էին

համարում քրիստոնյա ինքնությանը և դեմ-հանդիման դնում մուսուլմանական ինքնությանը:

Վերևում բերված պնդումը միակերպ չէ: Այլ օրինակներ էլ կան, որոնցից մեկը Մակարոյու Հանդի անվամբ մի հովիվ լսել է իր վրանում հյուրընկալված մի համալսարանի ավագակից, և որը իմ հայրն է փոխանցել ինձ (1): Այդ պատմությունը ներկայացնում է, թե Ճորոխի ճանապարհով դեպի Բաթում գնալ փորձող հայկական քարավաններն ինչպես են կողոպտվել և սպանվել: Նմանատիպ մեկ այլ պատմություն իր ֆեյսբուքյան էջում ներկայացնում է իր թուրք ազգայնական լինելը բացահայտ ատող Ա.ՈՒ.-ն. «Ես անձամբ գիտեմ մեր ազգուսակի՝ գրեթե 4-5 սերունդ առաջվա ներկայացուցիչներին, որոնք բոլորն էլ կրել են թուրքական և մուսուլմանական անուններ: Իմ հոր հորեղբայր Ալին զինվորական ծառայության ժամանակ զոհվել է Վանում՝ հայ ահաբեկիչների կողմից: Դարձյալ ես ինքս անձամբ լսել եմ պապիկիցս, որը վախճանվել է 100 տարին լրացնելուց հետո (Ալլահը լուսավորի նրա հոգին), թե Արդվինում բնակվող հայերը մակույկներով փախչելիս ինչպես են խեղճվել Ճորոխի ջրերում: Դրանք ամենայն հավանականությամբ ահաբեկչական խմբեր են եղել: Պապս հայարարությամբ էր պատմում, թե ինչպես է նրանց գետը թափել: Եվ այլ բազմաթիվ հուշեր...»: Արդվինում ապրող հայերը թե՛ մակույկով փախչում են և թե՛ ահաբեկիչ են: Նրա պապը որեւէ բան չի ասել, որ նրանք ահաբեկիչ են եղել: Նա ինքն է այդ եզրակացությանը հասնում: Քանզի պապը չի քննարկում Ցեղասպանությունը: Երբ սկսվում է Ցեղասպանության քննարկումը, ամեն բան խառնվում է: Առանց ասելու, որ «Հայերի նկատմամբ ցեղասպանություն ենք արել», ինչպե՞ս կարող է ասել, որ «Մենք իրականում հայ չենք և դեմ ենք նրանց»: Հենց այս մտահոգությունն է ստիպում, որ նման բաներ գրի: Արդեն իսկ նորմալ է, որ նրա՝ 4-5 սերունդ առաջվա նախնիները մուսուլման են եղել: Համալսարանի մահմեդականացման գործընթացը հասնում է մինչև 1600-ական թվականներ: Սակայն այս ֆեյսբուքյան պրոֆիլը ներկայացնող անձը նախընտրում է 4-5 սերունդ առաջվա նախնիների մահմեդական լինելը համարել հայկական ծագում չունենալու փաստարկ: Նորից հակասություններ, նորից իրարամերժություններ:

Իսկ Ե.Ա. անվամբ պրոֆիլի գրածները կարծես բացահայտում են նրա՝ համալսարանի պատմության և ինքնության հանդեպ ժխտողական կեցվածքը, պատմական ճշմարտությունների հետ ոչ մի կապ չունենալը, լրիվ հակառակը՝ քաղաքական նախապատվությունների համաձայն պատմություն հորինելը. «Ընկերներ, մենք գիտակից տարիքի հասած մարդիկ ենք: Մեզ համար առանձնապես էական չէ, որ մեզ հայ են ասում, կամ որ մենք հայ դյուններ ենք: Քանզի ժամանակակից սոցիոլոգիան մարդկանց սահմանում է՝ ոչ թե ըստ նրանց ծագման, այլ՝ պատկանելիության զգացման: Մեր հետագա սերունդն են դժվարություն ունենալու: Մեր երեխաներին խաբում են այդ գաղափարով, ջնջում նրանց ինքնությունը: Հազարամյակներ շարունակ համատեղ ապրած, ուրախության և տխրության մեջ միավորված մեր ազգը պատակտում են՝ ըստ էթնիկ տարբերությունների: Անկախ մեր ծագումից՝ հարկ է, որ միավորվենք՝ այս երկրի անբավարար ամբողջականության հիմքով»:

Այստեղ մասամբ ընդունվում է հայկական ծագումը: Ասվում է՝ էական չէ, որ մեր արմատները հայկական են, մենք այլևս թուրք ազգի մի մասն ենք: Պետք է նշել, որ այդ մտայնությունը կիսում են համալսարանի մի պատկառելի հատվածը: Համալսարանի մի մասն իրեն ընդունում է ոչ միայն որպես մահմեդական, այլ նաև՝ թուրք: Սակայն խնդիրը հետևյալն է. այսօր նման տեսանկյունից առաջ շարժվելով՝ նրանք իրավունք ունենալու արդյոք պատմությունը խեղաթյուրել՝ իրենց ներկայիս ինքնությունը համաձայն: Իրենց համար առանձնապես էական չեղող «հայ դյուններ» լինելու փաստն ինչու՞ են կարիք զգում թաքցնել իրենց երեխաներից:

Վերոնշյալ հարցի պատասխանի վերաբերյալ հուշումներ պարունակող մի միտք է կիսել Թ.Ա. անվամբ մի ֆեյսբուքյան պրոֆիլ, որը մի կողմից Համալսարանի ծառայության հիմնադրամիս բողոքում է համալսարանի մշակույթի ուսումնասիրմամբ և պահպանմամբ զբաղվող ՀԱՏԻԿ-ից, մյուս կողմից էլ՝ սպառնում վերջինիս. «Այս հիմնադրամում գտնվող համալսարանի ընկերներ և բարեկամներ,

ես գնահատում եմ ձեզ, սակայն արդյո՞ք գիտակցում եք, որ համալսարանի կանգնած են մի շատ մեծ խնդրի առջև: Մի հայացք գցեք ՀԱՏԻԿ-ի էջին: Նեղություն կրեք և ընթերցեք պարոն Մահիր Օզբանի հոդվածը և դրա տակ եղած մեկնաբանությունները: Չէ՞ք կարողանում նկատել, թե դրանք ինչ տեսակ գլխացավանք են բերելու Խոսպայի Համալսարանին: Այս կայքում գտնվող հարգելի գործարարներ, կարծում եք, թե նման կեցվածքը վաղը ձեր դեմ չի՞ դուրս գալու, մեր զավակներն այդ խնդրի պատճառով վնաս չեն՞ կրելու: Թերևս կասեք, թե մեզ ի՞նչ ՀԱՏԻԿ-ը: Իսկ ես ասում եմ, որ ՀԱՏԻԿ-ի ղեկավարությունը ձեզ հետ միասին է: Ես պահանջում եմ, որ լռեցվի այդ կայքը կամ մտածում, որ հարկ է, որպեսզի որևէ մեկը քաշի այդ կայքի ականջը: Առաջիկայում ի հայտ գալիք ամեն տեսակի բացասական բաների համար բոլորդ եք պատասխանատու: Իմ նպատակն է ձեզ ցույց տալ այդ զգայուն կետը: Համոզված եմ, որ դա է մեր առաջնային խնդիրը, և պետք է շտապենք...»:

Համալսարանի ինքնությանը և մշակույթին ուղղված աշխատանքները ինչու՞ պիտի փորձանք բերեն Խոսպայի Համալսարանին: Անկասկած, այն բանի համար, որ այդ աշխատանքները կարող են բացահայտել հայկական ինքնության և համալսարանի ինքնության միջև եղած կապը: Քանի որ հայկական ինքնությունը դեռ «խնդրահարույց» է համարվում, նշվում է, որ այն փորձանք կրելի Խոսպայի Համալսարանին: Գործարարներին հոված խոսքն ուղղակիորեն սպառնալիք է պարունակում՝ ուղղված տնտեսական շահերին: «Մեր զավակները վնաս կրեն» արտահայտությունը ևս կիրառվում է: Իսկ « Ես պահանջում եմ, որ լռեցվի ՀԱՏԻԿ-ը կամ մտածում, որ հարկ է, որպեսզի որևէ մեկը քաշի նրա ականջը» միտքը նշանակում է, որ պահանջվում է վերագործարկել այս հասարակության՝ տարիներ շարունակ կիրառած ինքնագրաքննությունը:

Որպեսզի հասկանանք, թե ինչու են դեռ շարունակվում նման վախերն ու մտահոգությունները, ինչու է համալսարանի մի պատկառելի հատված համառորեն խուսափում այդ քննարկումներից և ինչու են հակված մերժել իրենց հայկական արմատները, հարկ է մի քանի օրինակ բերել՝ առ այն, թե սոցիալական ցանցերում ինչպես են ընկալվում համալսարանից: Ուրիշները ևս գիտակցում են նրանց հայկական ծագումը, արմատներ, որ իրենք, գիտակցելով հանդերձ, ժխտում են: Գիտակցողները եթե անգամ այն դեպքում, երբ գործերը լավ են ընթանում, չեն խոսում այդ մասին, ապա երբ դրանք մի քիչ խառնվում են, անմիջապես հիշեցնում են, որ համալսարանից հայկական ծագում ունեն: Դրա լավագույն օրինակներից են Հումանիտար օգնության հիմնադրամի՝ IHH-ի ֆեյսբուքյան էջում 2014 թ. հուլիսի 15-ին Խոսպայում Ռամադանի երեկոյան ծոմից հետո դրվող իֆթարի սեղան զցելու ընթացքում տեղի ունեցած ընդհարումներից հետո արված մեկնաբանությունները. Ջ.Գ. անվամբ մի ֆեյսբուքյան պրոֆիլ գրել է՝ «Մեր միջի իրարեցիները...», Ջ.Հ.-ն՝ «Հայերին օգնելու հարկ չկա. դրսից են եկել, Թուրքիայում ապաստանել, հիմա էլ խառնակություն են անում երկրեսանիները»: Ք.Ս.-ն գրել է. «Մի վրդովվե՛ք, ընկերներ, դա հայկական օջախ է. նորմալ է»: Իսկ Յ.Թ.Ք.-ն արել է հետևյալ մեկնաբանությունը. «Կոմունիստ գրավոր շներ»:

Առերեսվի՛ր Ցեղասպանության հետ: Առերեսվի՛ր մուսուլմանության հետ: Եզրակացնելով կարելի է արձնագրել, որ Հայոց ցեղասպանությունը և նրա ժխտումը, Թուրքիայում հայ լինելը դեռևս հայիոյանքի և ստորացման թեմա լինելու փաստը շարունակում է ստվերել նաև համալսարանի՝ սեփական ինքնության վերաբերյալ քննարկումները: Համալսարանին, առանց երկկողմանի կերպով առերեսվելու Հայոց ցեղասպանության հետ, չեն կարող ազատորեն ուսումնասիրել, քննարկել իրենց ինքնությունը, կապ հաստատել սեփական պատմության հետ: Այդ առերեսման մի կողմն էլ վերաբերում է այն փաստին, որ նրանք իրենց մահմեդական ինքնության հետևանքով կազմել են Ցեղասպանության հանցագործ ինքնության մի մասը: Այս հարցին առերեսումը գուզահեռ կերպով կարողանալի սույն խնդրին Թուրքիայի ընդհանուր առերեսման հետ: Իսկ երկրորդ կողմը պետք է լինի Հայոց ցեղասպանության հարուցած հոգեբանական բեռից ազատվելը և առերեսվելը այն փաստի հետ, որ կրոնական տարբերությունը չի պարտադրում պատմական ու մշակութային

կապերի ժխտում: Այդ առերեսումը շատ ավելի կարևոր է թվում՝ համշնական ինքնության տեսանկյունից:

Այդ առերեսումներին զուգահեռ մեկ այլ առերեսում պետք է լինի հայերի՝ մահմեդական համշնացիների գոյության փաստի հետ առերեսվելը: Հայկական ինքնությունը քրիստոնեության հետ հավասարեցնող ընկալումները ոչ մի բանի չեն ծառայի, քան վերոհիշյալ համշնական հասարակության ունեցած տրավման էլ ավելի խորացնելուն: Հայկական ինքնության բազմակիացումը կնպաստի, որ համշնացիներն մուսուլման ինքնությամբ պահպանեն իրենց լեզուն, պատմությունը և մշակույթը:

Թուրքիայում Հայկական շուկան դարձնելու են տուրիզմի կենտրոն



Թուրքական իշխանությունները երկրի արևելյան նահանգներում զարգացման ծրագիր են ներկայացրել, որով նախատեսվում է նաև տուրիզմի խթանման համար վերականգնել մշակույթային կոթողներ և նոր ռազմավարություն մշակել:

Ինչպես տեղեկացնում է թուրքական Kanal A haber կայքը, արևելյան նահանգներում տնտեսական զարգացման շրջանակներում նախատեսվում է Մալաթիայում ստեղծել ծիրանի բորսա:

Իսկ տուրիզմի զարգացման հետաքրքիր քայլերից է լինելու Բինգյոլում Հայկական շուկայի վերականգնումը:

Դեպի Նեմրուժի Աստվածների հուշարձանախումբ զբոսաշրջիկների հոսքն ավելացնելու համար նախատեսվում է Մալաթիայից մինչև Աղըջաման ջրնդիատվող ճանապարհի կառուցել:

«La Stampa». Դերսիմի հայերն ընտրում են մկրտությունն ու ճշմարտությունը

Ապրիլի 24-ից հետո էլ համաշխարհային մամուլի էջերում հայտնվում են հրապարակումներ հայերի և 1915 թվականի իրադարձությունների մասին: Հերթական հոդվածը պատրաստել է «Vatican Insider» պարբերականը: Իտալական հայտնի «La Stampa»-ում հայտնված հոդվածում խոսվում է վերջին դեպքի մասին, որը մեծ արձագանք է ունեցել ողջ աշխարհի հայերի շրջանում: Ներկայիս Թուրքիայի տարածքում գտնվող Դերսիմ քաղաքում 12 ծպտյալ հայեր որոշեցին բաց մկրտվել, մինչ նրանց ծնողներն ու պապերը մեկ դար ստիպված էին թարքցնել իրենց ինքնությունը:

Հոդվածում ասվում է. «12 հայեր Դերսիմից (ներկայիս Թունջելի նահանգի հին անվանումն է) ընդունեցին իրենց

մկրտությունը Ստամբուլի հայկական եկեղեցում: Նրանք ծագումով այն ընտանիքներից են, որոնք 1915թ. Ցեղասպանությունից հետո թաքցնում էին իրենց հայկական և քրիստոնեական ծագումը, շուր մեկ դար: Այժմ նրանք որոշեցին հաղթել նախապաշարմունքներին և վերագտնել իրենց ինքնությունը:

Մկրտությանը նախորդել էր կատեխիզիսի և քրիստոնեական դավանանքի ուսուցման վեց ամիսը: Նույն այդ արարողությանը հոգևորականները քրիստոնեական պակադրությամբ ամուսնացրել են երկու զույգի: Մկրտված և ամուսնացածներից մեկը Հովհաննես Մինասն է: Նրա խոսքով, ինքը ցանկանում էր իրագործել ծնողների և պապերի առջև իր բարոյական պարտքը: «Սա երջանիկ օր է ինձ համար: Մենք երբեք չենք մոռացել մեր կրոնը, իսկ այժմ կարող ենք ազատ ապրել»,- ասել է նա Ստամբուլի հայկական «Ակոս» թերթին:

Մինչև 1915 թվականը Դերսիմի բնակչության երրորդ մասը հայեր էին: Նրանք բարձր մշակույթի կրողներ էին, բազմաթիվ գյուղերից յուրաքանչյուրում եկեղեցի և ծխական դպրոց կար: Ցեղասպանությունն այդ հողից ջնջեց ոչ միայն հայ բնակչությանը, այլև նրանց մասին հիշեցնող ճարտարապետությունը:

Այդուհանդերձ, որոշ ընտանիքների հաջողվել էր փրկվել և վերադառնալ՝ թեև թաքցնելով իրենց կրոնական և մշակույթային պատկանելությունը: Դերսիմում նաև բազում այեիներ են ապրել, որոնք դարերով խառնվել են հայերին: Շատ այեիներ հիշում էին իրենց հայկական արմատների մասին և պահել էին կապը իրենց ցեղի այն ճյուղերի հետ, որոնք հայ կամ այլ էին մնացել:

Շատերն այժմ վերադառնում են արմատներին, այս կամ այն չափով պաշտոնապես: Դիարբեքիի հայերը, որոնք Ցեղասպանության ժամանակ կրոնափոխ են եղել, այժմ երկու անուն ունեն՝ պաշտոնական, իսլամականը և այն, որը կապում է արմատներին: Իրենց արմատներին վերադարձածների ծնողները լավ գիտեին, որ իրենք հայեր են, բայց թաքցնում էին, քանի որ «հայ» բառը տարու էր:

Հասկանալի է, թե ինչու, եթե այսօր էլ Ցեղասպանության ժխտման քարոզչության մեջ, դպրոցական դասագրքերում հայերին նկարագրում են որպես դավաճանների»:

Հայերը ուզում են վերակառուցել Ստամբուլի մանկատունը և ընդունել բոլոր երեխաներին



Հայկական հիմնադրամը պլանավորում է Ստամբուլի Թուզլա շրջանում վերակառուցել «Քամի Արմեն» մանկատան շենքը այն բանից հետո, երբ ապամոնտաժման վիճելի պլանը հետաձգվել էր, և ներկայիս սեփականատերը

խոստացել էր, որ այն նվիրելու է հայկական համայնքին: Այս մասին գրում է Hürriyet Daily News-ը:

Գեղիքփաշա շրջանի Հայկական բողոքական եկեղեցու պատտոր Գրիգոր Աղաբալոյուն հայտարարել էր, որ իրենք պլանավորում են վերակառուցել շենքը հենց որ արտոնագիր ստանան: «Մանկատունը կարելի է օգտագործել եւ հիմա: Սակայն մենք պլանավորում ենք քանդել այն եւ նորից կառուցել նույն տեսքով: Մանկատունն ընդունելու է ոչ միայն հայ երեխաներին. նրա դռները բաց կլինեն բոլոր ազգերի երեխաների համար»,- ասել է Աղաբալոյուն:

Նշենք, որ Ստամբուլի «Քամի Արմեն» մանկատան շենքը բռնագրավվել էր թուրքական իշխանությունների կողմից 1987թ., իսկ դրանից հետո այն հանձնվել էր մի թուրք գործարարի: Վերջինս որոշել էր քանդել այն եւ էլիտար շենք կառուցել, սակայն հասարակության ճնշման տակ այդ որոշումը կասեցվել էր:

Թուրքիան հայերին պարտք է 800 մլրդ ԱՄՆ դոլար. անգլիահայ բարերար



Հայոց ցեղասպանության ճանաչման համար ամբողջ աշխարհի հայությունը պետք է համախմբված քայլեր ձեռնարկի, որ Թուրքիան վերադարձնի «պարտքը»: NEWS.am-ի հետ զրույցում նման կարծիք հայտնեց «Հայաստան» համահայկական հիմնադրամի Մեծ Բրիտանիայի մասնաճյուղի ատենապետ Արմինե Կարապետին:

Նրա խոսքով Թուրքիան հայերին պարտք է 800 մլրդ ԱՄՆ դոլարից ավելի գումար:

«Ամբողջը, իհարկե, վերադարձնել չի կարող, բայց մենք պետք է պահանջատեր լինենք: Յեղասպանության ճանաչման համար անվերջ պետք է խոսել, ոչ թե մեկ անգամ խոսել, ապա քնեցնել հարցը, օգուտ չի ունենալու: Անընդհատ պետք է աշխատանքներ կատարվեն, բավականին դժվար է, բավականին մեծածախս է լինելու, հուսամ՝ կլինեն մարդիկ, որոնք ծախսերը կհոգան», - ասաց Արմինե Կարապետին:

Ինչ վերաբերվում է Մեծ Բրիտանիայի կողմից Յեղասպանությունը չճանաչելուն, բարերարը նշեց, որ իրենք բազմիցս նամակներով դիմել են երկրի իշխանություններին, պախարակել նրանց կատարած քայլերը:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Միլյուշք

Թուրքիայի հայերը պատմության մեջ առաջին անգամ հզոր բողոքի երթի են դուրս եկել

Ստամբուլի Թուրքա թաղամասա Քամի Արմեն անունը կրող հայկական որբանոցը հայ ժողովրդին վերադարձնելու պահանջով Ստամբուլի հայերի Նոր Չարթոնք շարժումը խոշոր բողոքի ակցիա է կազմակերպել:

Թուրքական CNNturk-ի փոխանցմամբ՝ մայիսի 22-ի երեկոյան Ստամբուլի Բեյոջու թաղամասի Թունել կոչվող հատվածում հավաքվել են Ստամբուլի բազմաթիվ հայեր եւ նրանց աջակցող թուրք եւ այլ ազգության ակտիվիստներ: Հավաքվածների ձեռքին եղել են պատամներ՝ Քամի Արմենը հետ տվեք հայ ժողովրդին գրություններով:


Բողոքի երթի մասնակիցները քայլել են մինչեւ Գալաթասարայի լիցեյի մոտ, որտեղ հայտարարությամբ է հանդես եկել Նոր Չարթոնք շարժման անդամ Սայաթ Թեքիրը, ով հիշեցրել է, որ Քամի Արմենը ստեղծվել է 1962 թվականին եւ ընդունել է հայ որբերի, այդ թվում՝ Հրանտ Դինքին եւ նրա տիկնոջը:

Սայաթ Թեքիրը շեշտել է, թե իրենք հերթապահելու են Քամի Արմենում մինչեւ որոշում կայացվի այն վերադարձնել իրական տերերին՝ հայ ժողովրդին: Հայ ակտիվիստի հայտարարությունից հետո բողոքի ակցիան խաղաղ ավարտվել է:

Նշենք, որ Ստամբուլի «Քամի Արմեն» մանկատունը 1987-ին զավթվել է թուրքական իշխանությունների կողմից, այնուհետ վաճառվել թուրք գործարարի: Վերջինս էլ որոշել է քանդել մանկատունը եւ էլիտար տներ կառուցել: Հասարակական ճնշման արդյունքում մանկատանը քանդումը ժամանակավորապես դադարեցվել է:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

ԱՄՆ-ում հայ մաթեմատիկոսը թռիչքների անվտանգության եզակի համակարգ է մշակել



Վերջին 17 տարիներին ԱՄՆ-ում հետազոտողները թռիչքների կառավարման համակարգերի կայունությունը բարելավելու նպատակով օգտագործում են մաթեմատիկոս Նաիրա Հովակիմյանի հաշվարկները: Մարտին նրա հետազոտական խմբի մեթոդը Կալիֆորնիայի ավիաբազայում հաջողությամբ փորձարկվել է «Learjet» ինքնաթիռների մասնակցությամբ: Այս մասին գրում է «ECN Magazine»-ը:

Մեխանիկական գիտությունների պրոֆեսոր և Իլինոյսի համալսարանի գիտնական Հովակիմյանը 1988 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանը, որտեղ տեսական մեխանիկա և կիրառական մաթեմատիկա է ուսումնասիրել: Հետագայում նա ուսումը շարունակել է Մոսկվայում: 1994-1998 թվականներին շրջագայելով աշխարհով մեկ, օգտվելով սովորելու և դասախոսելու առաջարկներից, եղել է Գերմանիայում, Ֆրանսիայում և Իսրայելում:

1998 թվականին նա Ջորջիայի Տեխնոլոգիական համալսարանից թոնքների կառավարման կայունությունը հետազոտող թիմում աշխատելու հրավեր է ստացել: Միաժամանակ, ԱՄՆ ռազմաօդային ուժերի և NASA-ի հովանավորության շնորհիվ, Հովակիմյանը 2003 թվականին դառնում է Վիրջինիայի Տեխնոլոգիական համալսարանի դոցենտ: Այնտեղ էլ նա այլ հետազոտողների հետ համատեղ «L1» վերահսկողության տեսությունն է մշակում, որը կարող է օդայուն օգնել անսպասելի իրավիճակներում վերականգնել ինքնաթիռի վերահսկողությունը:

NASA-ն մոդելը փորձարկել է տարբեր դժվարին պայմաններում և ազդեցիվ մաներումներում: Հաջող փորձարկումներից հետո Հովակիմյանի հետազոտությունը միջազգային ճանաչում է ստանում:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

«Սոցիալիստական կուսակցությունը կրկնում է. մենք կարծում ենք, որ պլանավորված զանգվածային սպանություններն ու կազմակերպած տեղահանությունները, որոնց զոհը դարձան հայերը, ցեղասպանություն էր... Ոչ ոք չի կարող անպատիժ հեքքել բռնությունը այդ ազգի հանդեպ, որը պատմության նահատակ է, ուստի Սոցիալիստական կուսակցությունը կարգի է հրավիրում իր այն անդամներին, որոնք խուսափում են այդ դիրքորոշումից»,- հավելել է կուսակցության գլխավոր քարտուղարը:

Նրա խոսքով Էմիր Քիրը գիտի իր կուսակցության դիրքորոշումը, որը ինքը երբեք հարցականի տակ չի դրել: «Նա ցանկանում է ժողովուրդների հաշտեցման կողմնակից դառնալ և դեմ է հանդես գալիս բռնության ցանկացած դրսևորման, հատկապես քաղաքական բռնության կամ որևէ ազգի դեմ դրսևորվող բռնությանը»,- նշել է Ժիլ Մայոն:

Այսուհանդերձ թեպետ Սոցիալիստական կուսակցության հայտարարության սկզբում հստակ հիշատակվում է ցեղասպանություն եզրը, հետագայում այն ավելի երկիմաստ է դառնում, երբ խոսքը Էմիր Քիրի դիրքորոշման է վերաբերում: «Բելգիայի կառավարության և հետեւաբար Բելգիայի պաշտոնական դիրքորոշմանը համահունչ՝ Էմիր Քիրը ամբողջովին ընդունում էր դատապարտում է այդ մարդկային ողբերգությունը»,- ասված է հայտարարության մեջ:

Միջազգային

Բելգիայի սոցիալիստական կուսակցությունը թուրք պատգամավորին կարգի է հրավիրել



Բելգիայի Սոցիալիստական կուսակցության գլխավոր քարտուղար Ժիլ Մայոն լսել է Հայոց ցեղասպանության հիշատակին նվիրված լուսնային թուրքերի ներկա չլինելու կապակցությամբ պատգամավոր Էմիր Քիրի բացատրությունները: Այս մասին հայտնում է բելգիական RTBF հեռուստաընկերությունը՝ հավելելով, որ Սոցիալիստական կուսակցության այդ հայտարարությունը գուրկ չէ երկիմաստությունից:

«Հարաբերությունները բացահայտելը կարեւոր է: Չայրույթը կամ կոնֆլիկտը մեղմելը և մեկը մյուսին հասկանալը նույնպես շատ կարեւոր է: Սոցիալիստական կուսակցությունը որոշել է անել ե՛ւ մեկը, ե՛ւ մյուսը»,- նշել է Մայոն հանդիպման ավարտին արած հայտարարության մեջ:



Այդ հատվածի երկիմաստությունը ընդգծում է Բելգիայի պաշտոնական դիրքորոշման ոչ միանշանակ լինելը: Բելգիայում միայն Մենատն է համապատասխան բանաձև ընդունել, որով Թուրքիային կոչ է անում ճանաչել Հայոց ցեղասպանությունը: «Բելգիայի կառավարության պես Էմիր Քիրը Թուրքիային և Հայաստանին կոչ է անում ջանքեր գործադրել հարաբերությունների կարգավորման համար, որպեսզի ճանաչեն այն, ինչ կատարվել է անցյալում»,- ասված է Սոցիալիստական կուսակցության հայտարարության մեջ:

Ավելի վաղ NEWS.am-ը տեղեկացրել էր, որ Սոցիալիստական կուսակցության ծագումով թուրք պատգամավոր Էմիր Քիրը և այլ կուսակցությունների թուրք մի քանի պատգամավորներ ներկա չէին եղել Հայոց ցեղասպանության հիշատակի թուրքերի արարողությանը:

Լյուքսեմբուրգի խորհրդարանում ցեղասպանության բանաձև ներկայացրած պատգամավորի ճառը

Մենք ոչ ոքի անարգանքի այլունին չենք գամում, ցեղասպանություն իրականացրած մարդասպանները

վաղուց արդեն մահացել են, եւ նրանց սերունդները չեն կարող կրել իրենց պապերի մեղքի պատասխանատվությունը, սակայն նրանք պետք է ճանաչեն իրենց պատմական մեղքը: Այս մասին Լյուքսեմբուրգի խորհրդարանում Հայոց ցեղասպանության ճանաչման մասին բանաձեւը ներկայացնելիս հայտարարել է պատգամավոր Լորենթ Մոսարը, գրում է Tageblatt.lu-ն:

«Կարեւոր է մատնանշել իրականացված դժան Յեղասպանությունն ու հատկապես հարգել հարյուր հազարավոր զոհերի հիշատակը: ՄԱԿ-ը հայերի զանգվածային սպանությունները ճանաչել է որպես 20-րդ դարի առաջին ցեղասպանություն: Դրան հաջորդել են 22 երկրների խորհրդարաններ, որոնց թվում՝ Լյուքսեմբուրգի հարեւան երկրները՝ Ֆրանսիան, Բելգիան, Նիդերլանդները: Եվրախորհրդարանը նույնպես պաշտոնապես ճանաչել է Յեղասպանությունը: Գերմանիան առաջիկա օրերին խորհրդարանում Հայոց ցեղասպանության մասին բանաձեւ կընդունի:

Մեր բանաձեւը Թուրքիայի դեմ չէ: Լյուքսեմբուրգը պահպանում է Թուրքիայի հետ բարեկամական հարաբերությունները: Մենք ոչ ոքի անարգանքի պլունին չենք գամում: Մարդասպանները վաղուց արդեն մահացել են, եւ նրանց սերունդները չեն կարող կրել իրենց պապերի մեղքի պատասխանատվությունը, սակայն նրանք պետք է ճանաչեն իրենց պատմական մեղքը: Նրանց կողմից Հայոց ցեղասպանության դատապարտումը ուժեղ նշան կլիներ, դա կլիներ ուղերձ առ այն, որ նման բան այլեւս չպետք է կրկնվի»,- հայտարարել է Մոսարը:

Ինչպես ավելի վաղ հայտնել էր NEWS.am-ը, Լյուքսեմբուրգի Մեծ Դքսության խորհրդարանը միաձայն ընդունել է Հայոց Յեղասպանությունը ճանաչող բանաձեւ:

Տորոնտոյի քաղաքային խորհուրդը Հայոց ցեղասպանության փաստաթուղթ է ընդունել



Տորոնտոյի քաղաքային խորհուրդը Հայոց ցեղասպանության փաստաթուղթ է ընդունել:

Փաստաթղթում նշվում է, որ քաղաքային խորհուրդը ճանաչում է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը եւ հարգանքի տուրք մատուցում զոհված տղամարդկանց, կանանց եւ երեխաներին:

Փաստաթուղթը ներկայացվել է խորհրդի անդամ Ջիմ Կարիգիանիսի կողմից՝ հայ համայնքի աջակցությամբ: Չնայած խորհրդի որոշ անդամներ փորձել են խափանել փաստաթղթի ընդունումը, այն ընդունվել է 26 կողմ, 4 դեմ ձայներով:

Թուրքիայում չերքեզները քննարկել են Հայոց ցեղասպանության մեջ չերքեզների դերը



Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին Թուրքիայի չերքեզական «Գուշիփիս» ամսագիրը Թուրքիայում ապրող եւ արտասահմանից հրավիրված չերքեզների հետ քննարկել են Հայոց ցեղասպանության մեջ չերքեզների դերակատարությունը:

Ինչպես տեղեկացնում է Ստամբուլի հայկական «Ակոս»-ը, Թուրքիայում ապրող եւ արտասահմանից Թուրքիա ժամանած չերքեզները քննարկել են չերքեզների տեսակետը Հայոց ցեղասպանության վերաբերյալ եւ դրանցում չերքեզների դերակատարությունը:

Չերքեզական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների տեսակետը բավականին զարմանալի է եղել, քանի որ նրանք առանց կաշկանդվելու օգտագործել են Հայոց ցեղասպանություն եզրույթը:

Թուրքիայի չերքեզական «Գուշիփիս» ամսագրի խմբագիր Քուբան Քուրալը նշել է, թե բավականին դրական է, որ Հայոց ցեղասպանության հարցի շուրջ քննարկումներում երիտասարդ չերքեզները անհրաժեշտ են համարել, որ չերքեզներն իրենց բաժին մեղքն ընդունեն 1915-ի մեջ եւ առերեսվեն տեղի ունեցածի հետ:

Անկարայի չերքեզների միության նախագահ Յինալ Քոզուլը նշել է, թե չերքեզներից մասնակցել են Հայոց ցեղասպանությանը, ինչպես նաեւ եղել են չերքեզներ, ովքեր փրկել են հայերին:

Բելգիայի վարչապետ. Հայոց ցեղասպանությունը եղել է



Հայոց ցեղասպանությունը եղել է: Այս մասին La Libre րելզիական թերթին հայտարարել է երկրի վարչապետ Շարլ Միշելը:

Անդրադառնալով Հայոց ցեղասպանության հարցում իր դիրքորոշմանը՝ Միշելը հայտարարել է. «Մեր դիրքորոշումը

միշտ պարզ է եղել: Հայոց ցեղասպանությունը եղել է: Այդ հարցում երկու կարծիք չինել չի կարող»: Հիշեցնենք, որ Բելգիայի Մենատը 1998թ. ճանաչել էր Հայոց ցեղասպանությունը: Նշենք նաև, որ վերջերս Բելգիայում ծագումով թուրք որոշ պատգամավորների հետ վիճաբանություն էր առաջացել, քանի որ նրանք խորհրդարանում հրաժարվել էին լռության մեկ րոպեով հարգել Ցեղասպանության զոհերի հիշատակը:

Քուրդ պատգամավորը կրկին շեշտել է 1915-ին հայերի դեմ ցեղասպանություն է եղել



Թուրքիայի քրդական «Ժողովուրդների դեմոկրատական» (HDP) կուսակցության հայտնի պատգամավորներից Ալթան Թանը իր ելույթում կրկին շեշտել է, որ 1915-ին հայերի դեմ ցեղասպանություն է տեղի ունեցել:

Թուրքական Arca գործակալության փոխանցմամբ՝ HDP-ի պատգամավոր Ալթան Թանը կուսակցության Բուրսայի նահանգային գրասենյակում կազմակերպված մամուլի ասուլիսի ժամանակ անդրադարձել է Թուրքիայում նախընտրական զարգացումներին՝ դատապարտելով քրդական կուսակցության դեմ շարունակական հարձակումները:

Լրագրողներից մեկի հարցին, կապված 1864-ին չերքեզների կոտորածի թեմային, Ալթան Թանը պատասխանել է. «Այս տարածաշրջանում մեծ ողբերգություններ են տեղի ունեցել: Օրինակ՝ ապրիլի 24-ին խոսում էինք Հայոց ցեղասպանության մասին: Հայոց ցեղասպանությունը երբեք չի մոռացվի, այնպես էլ չեն մոռացվի Կովկասում եւ Բալկաններում տեղի ունեցած կոտորածները»:

Իրաքցի վանականը ԻԼԻՊ-ից հայերենով պահպանված հնագույն ձեռագրեր է փրկել



Իրաքցի վանական Նաջիբ Միխայելը պատմել է, թե ինչպես է ԻԼԻՊ-ից հնագույն ձեռագրեր փրկել, այդ թվում՝ հայերենով: Լիբանանյան «The Daily Star» պարբերականի փոխանցմամբ, զնդակները սույել են հոգևերականի

գլխավորելու, քիչ հեռու նկատվել է ԻԼԻՊ-ի սև դրոշը, սակայն վանականը մտածել է միայն հարյուրավոր իրաքյան ձեռագրերը փրկելու մասին:

Առաջին անգամ 2008 թվականի իսլամական հուզումների ժամանակ, Միխայելը կարողացել է թանկարժեք գրադարանը Մոսուլից փոխադրել Իրաքի խոշորագույն քրիստոնեական քաղաք Բաղդիդ: Անցյալ տարի վանականը կրկին վտանգ է զգացել, իսկ ԻԼԻՊ-ը նվաճել է քաղաքը քաղաքի հետևից՝ Իրաքում եւ Միջին Արևելքում ոչնչացնելով անգին հուշարձաններն ու թանգարանների եւ գրադարանների փաստաթղթերը:

Երբ հինգշաբթի ԻԼԻՊ-ը Միջին Արևելքում գրավել է հնագույն Պամիրա քաղաքը՝ հետագա ավերածությունների վտանգ առաջացնելով, Միխայելը Փարիզում պատմել է, թե ինչպես է տարվել Իրաքի 2000-ամյա քրիստոնեական ժառանգության մնացորդները փրկելու գաղափարով:

Նաջիբ Միխայելի փրկած հավաքածուն ներառում է պատմական եւ փիլիսոփայական աշխատություններ, քրիստոնեական եւ մահմեդական փաստաթղթեր, երաժշտության եւ գրականության մասին հայերեն, արամերեն, արաբերեն, ասորերեն գրառումներ:

Եվգենի Կիսինի համերգը Քարնեգի Հոլլում՝ նվիրված Ցեղասպանության 100-րդ տարելիցին



Ռուսաստանցի հայտնի դաշնակահար Եվգենի Կիսինը «Քեդ հետ, Հայաստան. համերգ՝ նվիրված Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին» ծրագրի շրջանակում ելույթ է ունեցել Քարնեգի Հոլլում: Այս մասին գրում է «The New York Times»-ը:

Միջոցառումը, որը հովանավորել է «Երեւանյան հեռանկարներ» միջազգային երաժշտական փառատոնը, անցկացվել է «Հովեր» պետական կամերային երգչախմբի միջազգային համերգային շրջագայության շրջանակում: Երգչախմբի հիմնադիր Սոնա Հովհաննիսյանը ծրագրի առաջին հատվածում ղեկավարել է համույթը:

Հնչել են հայկական ժողովրդական երգերի եւ հոգևեր ստեղծագործությունների գործիքավորումներ, մի քանի ժամանակակից ստեղծագործություն, Բրիտտենի Մուրը ծննդյան երգը, ինչպես նաև Հայոց ցեղասպանության հիշատակին լեհ կոմպոզիտոր Քշիշտոֆ Պենդերեցկու գրած երրորդ Մադոնսի երգչախմբային կատարումը:


Ծրագրի երկրորդ հատվածում Եվգենի Կիսինը Շոպենի չորս ստեղծագործություն է կատարել: Բուեն ծափահարությունների հետո դաշնակահարը երկրորդ անգամ կատարել է նաև հայկական տխուր մի երգ:

Հասարակական

Դր. Էդիկ Բաղդասարյան

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՆԻՖԵՍՏ

(Շրագրային Հայտարարություն՝ Առաջարկ)
2014 Տորոնտո – Կանադա
ISBN: 978-1-927860-27-4



Սկիզբը նախորդ համարից

Հայկական Հարցի ներկա խնդիրները

Հայկական հարցի էությունն անցյալում էլ, այժմ էլ նույնն է. հայ ժողովրդի իր հայրենիքում՝ Հայկական լեռնաշխարհում անկախ և ազատ ապրելու քաղաքական ու տարածքային պայմանների ստեղծում: **Հայկական հարցի լուծումը կարող է լինել միայն մեկը՝ հայոց լիարժեք պետականության վերականգնում պատմական Հայաստանի առնվազն այնպիսի ընդարձակ մի հողատարածքում, որտեղ հայոց քաղաքակրթության երկարատև անվտանգ գոյությունը երաշխավորված կլինի:**

Այլ կերպ ասած՝ Հայկական հարցը հայ ժողովրդի անվտանգության հարցն է, որը պահանջում է երկու նախադրյալի ապահովում. առաջին՝ հայկական լիարժեք և ամուր պետականության ստեղծում, երկրորդ՝ այդ պետականության անվտանգությունն ու կենսունակությունն ամբազորող հողային երաշխիքներ: Ընդ որում՝ մի նախադրյալի ապահովումն առանց մյուսի անիրագործելի է. ո՛չ հայկական պետությունն է ի վիճակի գոյատևել նախկին Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության 29.800 կմ² խիստ խոցելի, իր անպաշտպանունակությամբ ինքնըստինքյան «ազրեսիա հրավիրող» սահմաններում, ո՛չ էլ հայկական պետության բացակայությամբ հնարավոր կլինի հայ ժողովրդի գոյությունն առհասարակ:

Հայ ազգի և հայկական քաղաքակրթության գոյությունը վտանգված էին նախկինում, վտանգված են և այսօր, որովհետև չլուծված է մնում տարածքային՝ հողային խնդիրը: Հետխորհրդային ժամանակաշրջանում Հայաստանը դարձյալ հայտնվել է «լինե՛լ, թե՛ չլինե՛լ»-ի դրույթի մեջ: Խորհրդային Միության փլուզման գործընթացին զուգընթաց, հայության դեմ Թուրքիայի և նրա կրտսեր դաշնակից Ադրբեջանի ծավալա-պաշտական բացահայտ նկրտումներն ու վալրագ գործողությունները ևս մեկ անգամ վտանգում են արդի Հայաստանի ֆիզիկական

գոյությունը: Վերջին երկուսուկես տասնամյակի անկախ գոյության փորձը փաստել է, որ Հայաստանը կարողացել է գոյատևել՝ 42.000 քառ. կիլոմետրանոց բնական որոշակի սահմաններ ունեցող տարածքի վրա վերահսկողություն հաստատելու շնորհիվ միայն, ներառելով Հայաստանի Հանրապետությունն ու Արցախը՝ ազատագրված տարածքներով հանդերձ: Սա է Հայաստանի անվտանգությունն ապահովող այն նվազագույն հողակտորը, որից պակաս տարածքում հայոց պետականության գոյությունն այլևս կարող է անհնարին լինել:

Սա է այն նվազագույն հողակտորը, որն ապահովում է Հայաստանի անվտանգությունը տարածաշրջանային ու միջազգային ուժերի քաղաքական, ռազմական, հոգեբանական ու աշխարհաքաղաքական շահերի բախումներում և փոխազդեցություններում: Միևնույն ժամանակ, ամենևին չի բացառվում, որ Թուրքիայի և Ադրբեջանի անհաշտ քաղաքականությունը և վերջինիս կողմից պատերազմի հավանական սանձազերծումը Հայաստանին այլ ելք չթողնեն, քան է՛լ ավելի ընդլայնելու հայոց ռազմաքաղաքական իշխանությունը հայրենիքի բռնազավթված տարածքների վրա, ընդհուպ մինչև այն կետը, երբ թշնամին այլևս կդադարեցնի սպառնալից ու կհաշտվի հայերի՝ իրենց հայրենի հողի վրա պետություն ունենալու իրողության հետ¹⁰:

Ուստի Հայկական հարցի լուծման եւ Հայ ժողովրդի անվտանգության ապահովման ուղղությամբ հարկ է քննարկել եւ լուծել հետևյալ դրույթները.

- Ա - Հայ ժողովրդի պատմական հայրենիքի հողային ամբողջա-կանություն՝
 - Հայաստանի Հանրապետություն
 - Արցախ (Լեռնային եւ դաշտային)
 - Նախիչևան
 - Ախալքալաք
 - Արեւմտյան Հայաստանը ըստ Սելրի Դաշնագրի
- Բ - Հայ ժողովրդի ազգային միացյալ պետականության ստեղծում, որի առանցքային մասն է կազմում Հայաստանի Հանրապետությունը:
- Գ - Հայկական Յեղասպանության ճանաչումը Թուրքիայի կողմից եւ փոխհատուցման հարցը:
- Դ - Արեւմտյան Հայաստանում եւ Անատոլիայում բնակվող ծածուկ հայերի մարդկային իրավունքների վերականգնում:
- Ե - Սփյուռքահայության ներգաղթը Հայրենի հող:
- Զ - Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող հայկական հողերի վրա մնացած մշակութային ժառանգության վերագարձը իրենց իսկական տիրոջ՝ Հայ ժողովրդին եւ նրանց պահպանումը:

Հայկական Հարցի լուծման մանիֆեստ՝ Շրագրային հայտարարություն

2015 թվականին լրանում է հայոց ցեղասպանության 100-ամյակը: Թե Հայաստանի հանրապետությունում, եւ թե Հայկական սփյուռքում պատրաստվում են ոգեկոչելու այդ դարելիցը:

¹⁰ - «Ապագա» Հանդես, համար 33, 2008 թ. Հունիս:

Այդ 100 տարիների ընթացքում ի՞նչ է կատարել հայ ժողովուրդը, իր կորցրած մարդկային, տնտեսական, հասարակական, քաղաքական եւ մշակութային արժեքների գնահատման, հատուցման ու վերականգման ուղղությամբ: Այդպիսի գնահատական տալու համար անհրաժեշտ է հետադարձ հայացք նետել անցյալին, վերագնահատել տեղի ունեցած դրական ու բացասական փորձերը, դասեր վերցնել մանր ու խոշոր սխալներից, ապա վերլուծելով ներկա իրավիճակն ու առկա մարտահրավերները, ծրագրել հետագա քայլերն ու պարտավորությունները եւ հարմարավետորեն բաժանել նրանց հանձնառուների միջեւ:

Անկախ նրանից, որ այդ ծրագրերի գործադրումը ինչ եւ ինչքան աղբյուր կամ աղբյուրներ կպահանջի, անկախ նրանից, որ դրանք ժամանակագրական ինչ փուլեր ու տեղադրություն եւ ֆինանսական միջոցներ կարիք կունենան, փաստ է, որ այդպիսի ծրագրեր որոնց գլխավորն է համրվում Հայ Համագրային Ռազմավարական Ծրագիրը (<<ՌԾ) անհրաժեշտ է հայ ժողովրդի ներկա եւ ապագա բոլոր սերունդների համար: Այն պիտի հասակակալանքաղաքական, հասարակական-տնտեսական եւ հասարակական-մշակութային բոլոր միջոցառումների հիմքն ու թելադրող սկզբնաղբյուրը լինի, այնպես, որ ժամանակի ընթացքում տարբեր պայմաններում հնարավոր կդառնա այդ ծրագրի տարբեր մասնիկների իրագործումը: Մակայն ի՞նչ ակնկալիքներ կլինեն այդ ազգային ռազմավարական ծրագրի բացակայության դեպքում: Պարզ պատասխանը այն ինչ է, եթե ոչ Հայ ժողովուրդի ներկա իրավիճակը մանավանդ Հայոց ցեղասպանության կապակցությամբ:

Արդեն շուրջ հարյուր տարիներ են եկել ու գնացել, սակայն հայ ժողովուրդը կատարել է համարյա ոչինչ, եւ հիմա դրա դարեդարձին մտադիր է եւս մի շարք միջոցառումներ իրականացնել, որոնք մեծ հավանականությամբ ոչինչով չեն տարբերվելու այդ հարյուրամյա անգործունեությունից:

Մինչ օրս, թե Առաջին Հանրապետության, թե Խորհրդային Հայաստանի եւ այժմ երրորդ Հանրապետության իշխանությունները, եւ սփյուռքում գործող հայկական ավանդական կուսակցություններն ու նորագույն կազմակերպությունները չեն վերցրել արդյունավետ քայլեր Հայկական Հարցի ամբողջական լուծման ուղղությամբ, եւ չունեն հստակ արդյունավետ ծրագրեր, մանավանդ, որ շարունակում են հետեւել անցյալի սխալ գործընթացները, ոմանք էլ շահագործելով Հայկական հարցը, միայն եւ միայն օգտագործում են այն իրենց գոյատևման նպատակով՝ իրենց գրպաններն են լցնում Հայ ժողովրդի ազգային զգացումների հաշվին:

Հայկական Հարցի լուծման համար անհրաժեշտ է հետևյալ դրույթները.

- 1- Ուժեղ Ազգային բանակ
- 2- Ուժեղ Ազգային Տնտեսություն (Արդյունաբերություն, Գյուղատնտեսություն)
- 3- Հայրենի հողի վրա Հայ ժողովրդի բնակչության թվի աճ
- 4- Գործունյա Գիտական ներուժ
- 5- Համազգային հասարակական-քաղաքական, հասարակական-մշակութային, հասարակական-հայրենասիրական-հոգեբանական մակարդակի բարձրացում

- 6- Միջազգային քաղաքական ու իրավաբանական գործունեության աշխուժացում

Նշված դրույթների քննարկման համար հարկավոր է քննարկել

- ա) Հայաստանի ու Արցախի Հանրապետությունների անելիքները:
- բ) Հայաստանից անջատված հայկական տարածքների վրա ապրող հայերի անելիքները:
- գ) Հայկական Միյուռքի անելիքները:

ա) Հայաստանի եւ Արցախի Հանրապետություններ (ՀՀ, ԱՀ)

Հայաստանի եւ Արցախի Հանրապետությունները հանդիսանում են Հայկական հարցի լուծման կարեւարագույն հեռակետն ու առանցքը, ուստի նրանց ժողովուրդն ու պետությունը կրում են չափազանց մեծ պարտականություններ:

Ա- Ժողովուրդ

1-ՀՀ եւ ԱՀ տարածքում ապրող հայ ժողովուրդը պարտավոր է ապահովել Հայրենի Ազգային իշխանությունը: Ժողովուրդը պիտի փաստի, որ պատկանում է մի ազգի, որը ցանկանում է համաշխարհային պատմության մեջ ունենալ իր ուրույն եւ պատվավոր տեղը, ուստի այդ հանգրվանին հասնելու համար պիտի հույժ պայքար մղի թե ներքին կարգով եւ թե արտաքին ասպարեզում, նա պիտի ոտքի ելնի եւ պայքարի ներքին եւ արտաքին դավադրությունների, ապագային ու հակահայկական տարրերի ու գործընթացների դեմ, եւ փաստի, որ միասնական ազգ է եւ օժտված է բարձր կամքով կերտելու համար հայրենի երկիր, տեղական ժողովրդավարական պետություն, ազգային տնտեսություն, ուժեղ ազգային բանակ, ազգային գիտություն եւ մշակույթ, գիտակից հասարակություն:

2-Այդպիսի նպատակներին հասնելու համար, ազգասեր հայը պարտավոր է մնալ հայրենի հողի վրա եւ պայքարել բոլոր խոչընդոտների դեմ: Եթե Հայրենի հայր իր լուսավոր ապագան տեսնում է օտար ավերում, այդ հայը երբեք չի կարող ստեղծել ու պահպանել իր հայրենիքը եւ հարատևել համաշխարհային պատմության բեմահարթակում:

3-Մշակութային-հոգեբանական փոփոխություն, վնասագերծել հայրենի համայնքները անհարիր վարքերից ու ապրելակերպից:

4-Հայրենի ժողովուրդը բաց գրկով պիտի դիմավորի ներկա արտասահմանում ապրող իր ազգակիցներին, առանց շահադիտական մոլուցքի, միայն միասնական համագործակցություն մշակելու, միասնական բարեկամական ու բարիդրացիական կենցաղ վարելու նպատակով:

- 5-Համայնքային համագործակցության եւ հասարակական օժանդակության հիմնարկների (ինստիտուտների) կազմակերպում Հայրենի իշխանության պարզ եւ թափանցիկ ծրագրային ու նյութական ապահովությամբ:
- 6-Հայրենիքի բնապահպանության ապահովման ուղղությամբ համաժողովրդական ծրագրեր իրականացնել հայրենի բոլոր տարածքներում:
- 7-Ժողովրդական կամավորական շարժման ենթակառույցների ստեղծում եւ տարածում ՀՀ եւ ԱՀ ամբողջ տարածքում: Այդ ենթակառույցները պիտի իրենց գործունեությունը ծավալեն ու տարածեն ՀՀ, Արցախի, Արեւմտյան Հայաստանի, Ախալքալաքի ու Սփյուռքի միջավայրերում:
- 8-Ավելյալ ծրագրեր:

Բ- Պետություն

Բ-1- Ներքին քաղաքականություն

- 1-Հայտարարել արտակարգ իրավիճակ:
- 2-Վերանայել սահմանադրությունը, որի հիմքը պիտի հանդիսանա ժողովրդավարական-սոցիալիստական վարչակարգը: Այս կետը ունի իր հիմնավորված պատճառները:
- 3-Նշված հիմնական փոփոխությունների իրագործման համար կարիք կլինի անցկացնել հանրաքվե՝ միջազգային վստահելի կազմակերպությունների հսկելությամբ: Հարկ է օգտագործել Եվրոպական լավագույն փորձերից:
- 4-Հիմնավորել «Պետությունը ժողովրդի համար - ժողովուրդը պետության համար» նշանաբանը, եւ իրականացնել այն բոլոր ասպարեզներում:
- 5-Փոխել Ազգային հիմնը, ընդունել Խորհրդային Հայաստանի հիմնը, հարմարմարեցնել ՀՀ նորագույն իրավակարգին, կրճատել 30 վայրկյանի սահմաններում, քանի որ այն չափազանց ավելի ոգեւորիչ է քան ներկա անփառունակ հիմնը:
- 6-Ազգային Բանակը դարձնել երկրի ամենակարեւոր հիմնարկը:
- 7-Բացահայտել ու հիմնովին վնասագերծել մասոնական օթյակներն ու շոթարիական ակումբները, 300-հոգիանոց կոմիտեին պատկանող բոլոր անձանց ու հիմնարկներին: Այդպիսի շրջանակների հետ առնչությունը համարել ազգային դավաճանություն:
- 8-Արգելել այսպես կոչված «Ազգային ավանդական Հուսակցությունների» գործունեությունը Հայրենիքում, մինչեւ այն պահը, երբ նրանք նույնանուն կազմակերպություններ ունեն արտերկրում: Այդ պայմանը գոհացնելուց հետո, դատի տալ նրանց՝ իրենց անցյալ հայրենակործան գործողությունների պատճառով, որոնցից կարելի է նշել Ալեքսանդրապոլի դաշնագրի, Պրոմեթեի դաշինքի ստորագրումն ու Ֆաշիստական գերմանիայի հետ համագործակցությունը, Ներգաղթի դեմ գոծողությունները, մի քանի տասնյակ հայորդիների ահաբեկումը Իրանում, ԱՄՆ-ում, Լիբանանում եւ այլուր, Արաբա-իսրայելյան պատերազմի տարիներին ԱՄՆ-ի կենտրոնական հետախուզական

կազմակերպության լրտեսական ծառայություններ մատուցած կուսակցություններին, որոնցից ոմանք դեռեւս շարունակում են այդպիսի ծառայություններ:

- 9-Ազգային արդյունաբերության առաջնահերթությունը դարձնել Ազգային բանակի սպառազինման, զարգացման, նորագույն տեխնոլոգիաներով օժտելու հանգամանքն ու ծրագիրը:
- 10-Մշակել ազգային-տեղական արդյունաբերական Պրոյեկտիվ տնտեսություն (Proejective Approach) որի առաջնահերթությունը պիտի լինի նորագույն գեներերի, գյուղատնտեսական, արդյունաբերական շրջանակային մեքենաշինությունը:
- 11-Բարձրագույն ուսումնական հիմնարկները հարմարեցնել երկրի քաղաքական-տնտեսական, արդյունաբերական, գյուղատնտեսական նպատակներին:
- 12-Ազգային ակադեմիան դուրս բերել լճացումից ու ինքնանպատակ լինելուց, պարտավորեցնել նրա զանազան ինստիտուտներին զբաղվել երկրին հարկավոր կիռարական հետազոտություններով:
- 13-Չարգացնել համացանցային ու տեղեկատվական տեխնոլոգիաները:
- 14-Ստեղծել Համահայկական դրամատուն՝ բանկ, որի աշխատանքի հիմքն է լինելու համացանցը (ինտերնետ), որին հնարավորություն կունենան մասնակցել նաեւ աշխատատեղիում հայությունը, որի շնորհիվ համայն հայությունը նյութական պոտենցիալը պիտի ծառայի հայրենիքի զարգացմանն ու բարգավաճմանը:
- 15-Ստեղծել համացանցային տեղեկատվական պետական կայքէջ (Չայնասփյուռ, հեռուստատեսություն, տպագիր լրատու), որի միջոցով աշխարհասփյուռ հայությունը կձանդաճան երկրում եւ սփյուռքում կատարվող բոլոր իրադարձություններին: Եւ փոխադարձաբար Հայրենի ժողովուրդը կձանդաճան արտերկրյա հայությամբ:
- 16-Ստեղծել Համահայկական Ժողովրդական Խորհրդրան, որի ֆիզիկական կենտրոնը գտնվելու է Հայոց Մայրաքաղաքում, նրա նիստերը լինելու են ամսական մեկ անգամ վիրտուալ նորագույն տեխնոլոգիաների օժանդակությամբ, իսկ ֆիզիկական ընդհանուր ժողովը տարեկան մեկ անգամ ՀՀ-ում, բոլոր ճամբորդական ու կեցության ծախսերը պիտի հոգան տվյալ համայնքներն ու անհատ պատգամավորները: Պատգամավորների ընտրությունը կատարել համացանցային տեխնոլոգիաների օժանդակությամբ: Խորհրդարանի հիմնական պարտականությունն է լինելու Խորհրդարանի սահմանադրության, համահայկական ծրագրերի գործադրման եղանակի մշակումն ու ֆինասավորման միջոցների քննարկումներն ու ապահովումը: Նրա գործադիր օղակներից է լինելու Համահայկական Բանկը:
- 17-Ստեղծել վարչապետին կից Ազգային Ռազմավարական Ծրագրերի Կազմակերպություն, որը պիտի մշակի երկարաժամկետ, միջինժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր Ազգային տնտեսության զարգացման համար:


- 18-Երկրի նախագահի ամսական ժողովրդական հանդիպումով, հանդես գալ երկրի ռազմական, անվտանգության ու արտաքին հարաբերությունների ու միջազգային իրադրությանը մասնակցած իր գործունեության եւ Համահայկական ծրագրերի մասին ընդարձակ զեկուցմամբ:
- 19-Երկրի վարչապետի ամսական զեկուցմամբ ժողովրդին ներկայացնել կատարված բոլոր աշխատանքներն ու իրականացվող ծրագրերի վերջին իրադրությունը:
- 20-Ազգային ժողովը հարկ է մշակի հակակաշառային խիստ կարեւոր օրինագիծ եւ օրենք, որի գործադրումը պիտի հանձնվի երկրի բարձրագույն հետախուզական, դատական, ու ոստիկանական մարմիններին:
- 21-Խիստ ստուգել ՀՀ նախագահների, վարչապետների, նախարարների ու բարձրաստիճան պետական պաշտոնյաների ունեցվածքը՝ պաշտոնը ստանձնելուց առաջ եւ հետո մինչեւ նրանց պաշտոնավարության ավարտը:
- 22-Պատկան նախարարությունները փաստացի զեկույցներ պիտի ներկայացնեն իրենց կատարած աշխատանքների մասին, որը պիտի հասանելի լինի ժողովրդական բոլոր խավերին:
- 23-Մշակել համացանցային հենակետ, երկրի բոլոր բնագավառների կարիքների ու խնդրվող միջոցների տվյալների տեղավորման համար եւ առիթ ստեղծել Համահայկական մակարդակով համագործակցության պոտենցիալի մասնակցությունը այդ կարիքների վերացման ուղղությամբ:
- 24-Հայաստան Համահայկական Հիմնադրամը պիտի անցնի պետական ստուգման ու հաշվետվության խիստ քննարկմանը՝ համապատասխան կանոնակարգով: Նա պիտի իր գործունեության իսկական ոլորտում ներառի Հայկական զինված ուժերի սատարման երկարատեւ ծրագիրը, եւ ստեղծի բանկային հատուկ հաշիվ Համահայկական Բանկում:
- 25-Կատարել հարկային համակարգի հիմնական բարեփոխումներ: Երկրում աշխատող բոլոր մանր ու խոշոր ձեռնարկություններին համակարգչային գրանցման պարտադիր օրենքի ենթարկել, օրինագանցներին ենթարկել խոշոր տուգանքների ու երկարատեւ ազատազրկման:
- 26-Օլիգարխիան համարել ազգային դավաճանություն եւ դատել համապատասխան օրենքներով: Տնտեսական չարաշահումներ կատարած անձանց ենթարկել խիստ պատժամիջոցների (գումարային եւ ազատազրկման):
- 27-Իրականացնել համատարած հայրենասիրական պրոպագանդա, ժողովրդի ազգային ու հայրենասիրական զգացումներն ու հավատքը բարձր մակարդակի վրա դնել ու զարգացնել:
- 28-Սփյուռքի նախարարությունը պիտի ներգրավի սփյուռքահայությունը իր աշխատանքներում, ծառայի որպես մի կամուրջ արտերկրում ապրող հայերի եւ հայրենի ժողովրդի ու պետության միջեւ առանց խմբակցային կողմնորոշումների: Օգնել սփյուռքահայությանը հայապահպանման ծրագրերով, մշակութային ձեռնարկներին,

- գրականության առաքման, եւ այդպիսի այլ միջոցներով, կազմակերպել հարատեւ ներգաղթի ծրագիր:
- 29-Մշակույթի նախարարությունը, հարկ է զարգացնել երկրի մշակութային հիմնարկները՝ կազմակերպել արտասահմանային կանոնավոր ամսական ձեռնարկներ (Սփյուռքի նախարարության հետ համատեղ), որի եկամուտի գլխավոր մասը պիտի ծառայի Ազգային բանակի ու գիտական հիմնարկների զարգացման ու ռազմավարական ծրագրերի իրականացման ուղղությամբ:
 - 30-Սահմանափակել օտար անունների օգտագործումը տնտեսական, գիտական, ուսումնական եւ այլ հաստատությունների օրացատախտակի վրա: Ժողովրդին եւ մանավանդ ձեռնարկատերերին քաջալերել ու առաջնորդել դեպի ազգայինը, ստեղծել ու արտադրել Ազգային տնտեսության զարգացման հաշվին, եւ ընտրել ոսկեդենիկ հայկական բառեր, բառակապացություններ ու զուտ հայկական անվանումներ իրենց արտադրության ու ձեռնարկի համար:
 - 31-Համաժողովրդական պայքար ծավալել (համապատասխան օրենքներով) օտարամուտ բացասական ազդեցությունների դեմ, որոնք հակասում են զուտ հայկական մշակույթին ու հայկական հասարակական-քաղաքական ենթակառուցյին: Եւ քաջալերել հայկական վարք ու բարքը, կենցաղակերպը, հոգեւոր ու աշխարհիկ մշակույթը եւ այլն:
 - 32-Մրցանակաբաշխման նոր ծրագիր մշակել ու գործադրել, որով պիտի գնահատվեն այն անհատներն ու հիմնարկները, որոնք գերազանց ծառայություն կը մատուցեն հայկական մշակութային, գիտական, արդյունաբերական, տնտեսական եւ մանավանդ զինվորական ասպարեզներում: Այդ իրադարձությունը վերաբերում է ինչպես Հայրենիքում, այնպես էլ Սփյուռքում ապրող հայերին ապա օտարազգիներին: Հարկ է վերացնել թայֆայական, խմբակցային, կուսակցական մոտեցումները ազգային հարցերի բնագավառից:
 - 33-Սփյուռքի նախարարության հովանավորությամբ եւ ՀՀ եւ Սփյուռքի հասարակական կազմակերպությունների ու բարերարների կողմից ֆինանսավորվող «Համահայկական հրատարակչական Մարմին»- օգնելու հայրենի եւ սփյուռքահայ գրողների, բանաստեղծների, արվեստագետների ու հետազոտողների գործերի հրատարակմանը (տպագիր, թվային, եւ այլն):
 - 34-ՀՀ-ում ապրող ազգային փոքրամասնություններին հնարավորություն տալ իրենց արտերկրի հայրենակիցներին փոխադրել Հայաստան, այդ շարքում Եգդիներին, Ատրիներին, Չազաններին եւ այլն:
 - 35-Ծրագիր Բ:
 - 36-Այլ ծրագրեր:

(Շար. 6)

ՄՇԱԿՈՒՅՈՒ

Ծանոթանանք հանճարեղ արվեստագետ ճարտարապետ Չարեհ Հադդաջյանի հետ



Վերջերս առիթ ունեցանք օտար ավերում ստեղծագործող ճարտարապետ Չարեհ Հադդաջյանի հետ: Նա ծնվել է 1943 թվականին Սայրա-Լիբանան: Մայրի Ուրֆայից իսկ հայրի Աքչեհեից (կմ Անկարայից 70 կմ հեռավորությամբ): Հայրը ցեղասպանությունից առաջ հեռացել է ծննդավայրից, սակայն առաջին աշխարհամարտի ավարտից հետո վերադառնում է հայրենի տուն և այն գտնում թուրքերի կողմից բռնագրավված, եւ մատնվելով դժբախտությանը՝ ձերբակալվում և ուղարկվում է Դեր-Չքր, սակայն գիշերով իր ընկերոջ հետ փախչում է Հալեպ: Հալեպում տեղեկանում է իր ընտանիքի բոլոր անդամների սպանության մասին, բացի իր մի եղբորից (Մարմարա թերթի խմբագիր Ռոբեր Հադեջյանի հայրը), որը գտնվում էր Կ. Պոլսում: Այս անցում է Բեյրութ եւ հետո Սայրա, ուր ամուսնանում է Օր Արուսյակին և ևս ունենում երեք որդի և մեկ աղջիկ, և զբաղվել է ոսկերչությամբ ու ժամագործությամբ և 1946 թ. եղել է հայ համայնքի ատենապետ: Այստեղ է ծնվել է նրա որդին՝ Չարեհը:



Չարեհը սովորել է տեղի հայկական և ֆրանսիական ու կառավարական դպրոցներում: Այս նա անցնում է Փարիզ եւ սովորում մաթեմատիկա և ֆիզիկա (երկու տարի) և ճարտարապետություն (յոթ տարի) Բոգարում (Ecole Nationale Supérieure Des Beaux-Arts) և ավարտել 1972թ. ու

վերադարձել Սայրա, այս անցում Բեյրութ եւ 1973 թվականից աշխատանքի է անցնում Դուբայում ճարտարապետական զանազան ընկերություններում իսկ 2010 թվականից բնակվում և ստեղծագործում է Դոհայում Ն ունեցել է նաև իր անձնական ընկերությունը ճարտարապետական ու կառավարման խորհրդակցական բնագավառում, աշխատել է զանազան ծրագրերում, որոնցից են ճանապարհներ, օդանավակայաններ, մարզավաններ, ապարանքներ ու պալատներ, զինվորական հենակետներ և այլն:



Նա 1976 թ. ամուսնացել է օր. Լենա Մանսուրյանի (Լիբանան) հետև բախտավորվել երեք զավակներով՝ երկու տղա և մեկ աղջիկ (Վահե, Վալե և Էլիզ), որոցից առաջինը բնակվում է Լիբանանում իս մյուսները ԱՄՆ-ում:



Հույս Ամսագիր



գործերը պարունակում են Կիրառական արվեստը, արձանիկներ եւ ձեռագործ աշխատանքներ եւ հատկապես յուղաներկ ու ջրաներկ պաստառներ, որոնցից ներկայացնում ենք մի քանիսը:



Ճարտարապետ Չարեիր մանավանդ վերջին տարիներում նվիրվել է գեղարվեստին, ստեղծագործել է բազմաթիվ աշխատություններ: Նրա գեղարվեստական

Հանելի իրադարձություն գրական աշխարհում

ՀԱՍՅ՝ ՀՀՅՅ ՄԹՅ Մ
Երևան



Ապրիլի 21-ին ՀՀՄ կյոբ սրահում տեղի ունեցավ արձակագիր Հովիկ Վարդույանի «Եթե մոռանաս, կանիժեմ քեզ» վիպակի անգլերեն և պարսկերեն թարգմանությունների շնորհանդեսը:

Վիպակը 1915թ. ցեղասպանության ժամանակ 14-ամյա աղջնակի պատմությունն է: Անցնելով դժոխքի բոլոր պրակներով, իր տոկոսության ու համարձակության շնորհիվ կարողացել է փրկվել դաժան կտտանքներից:

Գիրքը պարսկերեն և անգլերեն լեզուներով թագմանել է Արմինե Ղազարյանը, խմբագրել և հրատարակել է կանադահայ Էդիկ Բաղդասարյանը:

Շնորհանդեսը վարող բանաստեղծ Արտաշես Արամը մինչ ելույթները կարդաց Կանադայից ուղարկված Էդիկ Բաղդասարյանի խոսքը՝ վիպակի, հեղինակի և թարգմանության մասին: «Երբ ստացա Հովիկ Վարդույանի գրքի պարսկերեն և անգլերեն թարգմանության խմբագրաման ու հրատարակման առաջարկությունը, չէի պատկերացնում, թե ինչքան պիտի հուզվեի այդ գործի ընթացքում: Շատ երկար տեւեց, որպեսզի կարողանամ թղթափել գրքում ներկայացված ցավն ու վիշտը:

Հովիկ Վարդույանի գրիչը բազմաբեղուն է, նրա տողերի շունչը հինավուրց՝ սակայն նոր է ու թարմ, գեղարվեստի ազդեցիկ ու փայլուն օրինակ: Նրա ստեղծագործություններն ունեն ամուր գրական կառուցվածք: Դրանք ինձ համար արդի հայ գրականության ամենօրինակելի ու վառ էջերից են: Ի խորոց սրտի շնորհավորում եմ Հովիկին, ցանկանում երկար տարիների բեղմնավոր գրական կյանք և նորանոր հաջողություններ:

Անդրադառնալով թարգմանությանը, նշեմ, որ ի պատիվ Արմինե Ղազարյանի, նրան հաջողվել է հավատարիմ մնալ հեղինակի լեզվամտածողությանը, անգլիալեզու և պարսկալեզու ընթերցողին լիարժեքորեն հասցնել նրա ասելիքը»:

ՀՀՄ նախագահ Էդվարդ Միլիտոնյանն ուրախալի համարեց այն փաստը, որ հայ ժամանակակից գրողների գործերը թարգմանվում են տարբեր լեզուներով՝ օտարալեզու ընթերցողին հաղորդակից դարձնում հայ ժողովրդի մշակույթին և պատմությանը:

Արտաշես Արամի հավաստմամբ՝ «Վարդույանը եզակի մտավորականներից է, որ չի ընկրկել կյանքի դժվարագույն մարտահրավերների դեմ, չի երկնչել, երբ լինել-չլինելու խնդիրն էր դրված, չի երկնչել նաեւ ձեռնակ թղթի առջև:

Միջազգային իրավագիտության դոկ. Աիդա Հովհաննիսյանը նշեց, որ գրքի անգլերեն տարբերակը փորձել է կարդալ երկու տեսանկյունից. նախ՝ որպես ոչ հայ մարդ արդյոք գիրքն ինչ-որ բան կասի՝ անգլիախոս մարդուն, և երկրորդ՝ տեսնել, թե մեր երիտասարդ սերունդը, որ այսօր դժվարանում է հայերեն կարդալ արտասահմանում, ինչ-որ բան կասի՝ իրեն այդ գիրքը: Նրա կարծիքով այդ տեսակետից գիրքը հաջողված է և, քանի որ գեղարվեստական լինելով հանդերձ, լեզուն պարզ է, դյուրըմբռնելի, վիպակը խոսում է մարդու զգացմունքներից:

Թարգմանությունը ընդհանուր առմամբ հաջողված և լավ է, սակայն նկատելի են նաեւ ոչ էական՝ տեխնիկական աննշան թերություններ:

Իսկ բանասիրական գիտությունների թեկնածու Անահիտ Եղայանն ասաց, որ վիպակը կարողացել է պարսիկ ընթերցողի աչքերով և նույնպես արժեւորեց թարգմանչուհու աշխատանքը: «Տիպաբեղում պարսկերենին մայրենի լեզվի նման՝ հարագատ է մնացել բնագրին և հեղինակի ասելիքը շատ պարզ ու սահուն փոխանցել ընթերցողին»:

Բանասիրական գիտությունների թեկնածու, գրականագետ Սաթենիկ Ավետիսյանը բարձր գնահատելով հեղինակի և թարգմանչի աշխատանքը, մասնավորապես ընդգծեց «Հովիկ Վարդույանի» միայն վերջին մի քանի տարիներին գրած վիպական գործերի («Կանիժեմ», «Փոքր Միերի վերադարձը», «Եթե մոռանաս, կանիժեմ քեզ») թեմատիկական փաստում է, որ արձակագրի հայացքը ուղղված է միաժամանակ անցյալին, ներկային և ապագային, իսկ ներկան ապրում և վավերագրում է ամենաակտիվ քաղաքացիական կեցվածքով անմիջականորեն իր մասնակցությունը բերելով իր հայրենիքի բոլոր խնդիրների լուծմանը ամենատարբեր մակարդակներում:

«Եթե մոռանաս, կանիժեմ քեզ» վիպակի ստեղծման պատմությունը ամենահավաստի վկայությունն է նրա, որ մարդիկ հաղորդակցվում են նաև մտքի կենսահոսքերով, և դա նույնքան իրական շփում է, որքան ֆիզիկական լուսնային շփումը: Մեծ եղեռնի սարսափների ականատես ու խոշտանգումից սեփական խիզախումով փրկված տասնչորսամյա հայուհին մի ամբողջ կյանք ապրել է իր ու իր ազգի մեծ ցավը սերունդներին ավանդելու երագանքով, և մահից հետո էլ նրա հոգին չի գտնում երկնային հանգրվանը, քանզի չի թողափել հոգու մորմոքը: Մերունդների հոգեբանության վրա ցեղասպանության հետևանքների ուսումնասիրությամբ հայտնի ֆրանսահայ հոգեվերլուծաբան Հելեն Փիրայանը իր ուսումնասիրությունների արդյունքում եզրակացնում է՝ քանի դեռ անհատապես վկայված ու վավերացված չէ տարագրված ու անապատներում խոշտանգված ամեն հայի մահվան փաստը, և քանի դեռ նրանք անթաղ են ու անգերեզման, այսինքն՝ ամբարցված չէ մահվան իրողությունը, սերունդները կրելու են նրանց անավարտ մահվան հոգեբարդոյթը, ողջերը դառնալու են գերեզմանը բոլոր անհանգրվան հոգիների: Գրի առնելով պատմությունը մի ծեր կնոջ, ով օրեր շարունակ գրողի երագում է հայտվել և անեծքի սպառնալիքով պահանջել ամբարցել իր հիշողությունները, ըստ էության Հովիկ Վարդույանը խաղաղ հանգրվանի հասնելու հնար է տվել Ցեղասպանությունից մագապուրծ մեկին, ով դարձել էր անանուն մեռյալների հիշատակների դամբարանը: Այս վիպակի ծնունդով նրանց մի մասը փրկվեց մոռացումից:

Այն, որ եղերական թեմայով գրված այս գործը Հայոց Ցեղասպանության 100-րդ տարելիցի օրերին անգլերեն և պարսկերեն թարգմանությամբ դրվում է այլալեզու ընթերցողի սեղանին, վկայությունն է նրա, որ ամեն ինչ ճիշտ ժամանակին է արվել, ինչի համար խորին երախտագիտություն թարգմանչուհի Արմինե Ղազարյանին երկրեզու թարգմանության աշխատատար գործը ինքնակամ, սիրահոժար ստանձնելու և պատվով կատարելու համար»:

Իրենց ելույթներում թարգմանչուհու հասցեին դրվատանքի խոսք ասացին նաեւ տողերիս հեղինակը, արձակագիր Ալիս Հովհաննիսյանը, փիլիսոփա Արմեն Բարայանը, բանաստեղծ Երվանդ Պետրոսյանը:

Վիպակի թարգմանության համար իր երախտագիտությունը հայտնեց գրքի հեղինակը:

Միջոցառումը եզրափակեց վիպակի թարգմանչուհի Ա. Ղազարյանը: Նա շնորհակալություն հայտնեց իր համար անսպասելի հենյաժ բարձր գնահատականների առիթով և հավելեց, որ իր պարտքն է համարել թարգմանելու վիպակը, որպեսզի ոչ հայ ընթերցողը ևս իրագել դառնա ցեղասպանության ենթարկված հայ ժողովրդի տառապանքին: Հույս հայտնեց, որ կատարած փոքրիկ ներդրումը կծառայի իր նպատակին և ընթերցողը խղճի

թելադրանքով կյանհանջի, որ պատասխանատվության ենթարկվեն ցեղասպանություններ և նման ոճրագործություններ իրականացնողները, ինչից հետո միայն կարող է արդարություն հաստատվել աշխարհում: Միաժամանակ հույս հայտնեց, որ: Ա. Ղազարյանը հավաստիացրեց, որ սկսած գործը կունենա շարունակություն:

Խոհեր

Մեր Անցած Ճամփան

Թ. Ղարախանյան Միրակցի

Ահվազ քաղաքում էլ, ով ծանոթ ու աշխատանք գտնելու միջնորդ ուներ հաջողությունը ավելի էր: Օրինակի համար, իմ միջնեկ քույր Հայկուշը որ Ահվազ քաղաքի “Նեզամ Վաֆա” միջնակարգ դպրոցի գերագանց թվանշաններով դիպլոմ ուներ և միջնակարգում ձեռագործի գեղարվեստական մեղալ շահող լինելով՝ աշխատանք չէր գտնում և երկար ժամանակ պարապ էր. թեպետ քանի անգամ ուսուցչության դիմեց Ահվազի հայոց դպրոցին, բայց կուսակցական չլինելով մերժվեց և այնքան պարապ մնաց մինչև մի տարի անց երբ մեր մեծ հորեղբոր տղա Արմենակ Ղարախանյանի Ահվազ եկավ, որը Նավթային ընկերության պահեստանոցների բարձրաստիճան պատասխանատու և կուսակցական էր, իր միջնորդությամբ քույրիկս անդամագրեց տեղի կուսակցությանը: Քիչ ժամանակ անց, ընդունվեց հայոց դպրոցում իբրև գեղարվեստի ուսուցչուհի:

Մի այլ օրինակ. իմ անձս, որ զանազան աշխատատեղերի դիմումներից ոչ մի պատասխան չստանալով, հուսահատությունից, ճարահատ մտահոգություններս շարանը թողի առա, և երիտասարդ սրտիս խոսքը արտահայտեցի մի օտար սրտցավ հայի և գրավոր դիմեցի ազգային համբավ ունեցող հարգելի և ազնվական հայ ազգի զավակ Օննիկ Սահակյանին, (լույս իր և իր տիկնոջ Հասմիկ Օհանյանի հոգիներին, որ երկուսն էլ տասնյակ տարիներ Մասչեղ Մուլայան քաղաքում, անձնագրիությամբ, հոգով ու սրտով անպիղծ ու անարատ սիրտ սրտով ծառայեցին հայ մշակույթին, հայ դպրոցին և հայ կարիքավոր ընտանիքներին, որոնց անձամբ վկա ենք եղել... ևրանք փոխադրվեցին Թեքրան, շարունակեցին ազգային ծառայությունը և Հայրենքի անկուխության օրերին երկուսով տեղափոխվեցին Հայաստան և 2013 թվականին երկուսն էլ մեկը մյուսի հետեից մահացան և ընդմիջտ ննջեցին Հայրենի Հողում...Լույս Օննիկ և Հասմիկ Սահակյանների հոգիներին:

Պրն.Օննիկ և տիկ. Հասմիկ Սահակյանները դեռ Մասչեղ Մուլայանում էին և երկուսն էլ ակտիվ էին հայկական դպրոցա-եկեղեցական, մշակույթային և բարեգործական ծրագրերով և հատկապես հայ բանվոր դասակարգի դարդին հասնող անձեր էին:

Այնպես ստացվեց որ Ահվազի Քարուն գետի ափին, մի օր քայլելիս, հարգելի Օննիկ Սահակյանի պատկերը մտքովս անցավ, հենց այդպես մի երկու էջանոց բաց նամակ գրեցի հարգելի Օննիկ Սահակյանին...առաջին էջը «Շունը և գայլի հանդիպումը» դասագրքիերից վերհիշեցի

